


ԴՐՕՇԱԿ



„ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ“ ՕՐԳԱՆ

Կ Ը Հ Ր Գ Ե Հ Ի Ի

Տաճկահայաստանից հետո հետ է մեզ հասնող լուրերը սարսուռ են ազդում: Ընդհանուր կոտորածի ծրագիրը, որ վաղուց մշակուում էր սուլթանի պալատում, սուլթանի անմիջական հսկողութեան տակ, գրեթե գործադրեց. ամբողջ Տաճկահայաստանը իւր հայաբնակ քաղաքներով, գիւղերով, աւաններով ենթարկեց յարձակումների, թալանի, աւերումի և հրդեհի, իսկ հայ ժողովուրդը սարսափելի տանջանքներով սրբի անցկացրին, կոտորեցին, ջարդեցին, միաժամանակ գործ դնելով սովորական բռնաբարութիւնը, անպատեւել ու առեւանգումը... և այդ գազանութիւնները դեռ շարունակուում են, դեռ տներից բարձրանում է լափող բոցը, իսկ գեանից արեան գոլորշիները: Թէև արիւնը ծովի պէս ծփում է, բայց թշնամին ոչ հագեցել և ոչ էլ հոգնել է. նա ձգտում է կատարելապէս ի կատար ածել իւր ծրագիրը:

Իրերի այդ դրութիւնը ստիպեց Եւրոպական պետութիւնները հապճեպով իրենց պատերազմանաւերը ուղարկել Օսմանեան պետութեան ջրերը. և ամբողջ աշխարհը հետևում էր Եւրոպական պետութիւնների այդ տենդային գործունէութեան ու յոյս էր տածում հասնելու որոշ եզրակացութեան, տեսնելու կոտորածի դարումը: Բայց ապարդիւն. կոտորածը շարունակուում է, իսկ նաւերը սովորական դրօսանքներ են կատարում. պետութիւնների անհաշտելի շահերը նրանց անգործունէութեան են մասնել, հարցը շարունակուում է առ կախ մնալ և նրա լուծողը կը լինի սուլթանի կառավարութեան կրօքին հասնող ուժեղ հարածը...

Սուլթանը, արեւելքի ու հարեւմի այդ հարազատ զաւակը նախատեսել է այդ, որ իւր ոյժը կենարոնացնում է նշանաւոր կէտերում՝ զսպելու անմիջապէս մի սր և է շարժում: Եւ միաժամանակ ձեռք բերելու Եւ-

րոպական պետութիւնների հաւատը դէպի ինքը և իւր կառավարութիւնը, որպէս զի կարող լինի շարունակել, պահպանել իւր խօսքի ոյժը՝ քողարկելու արեւալից տեսարանները և աւելի ճարպիկութեամբ խաղալու, նա կատարում է մի բացառիկ գործ, որ իւր տեսակի մէջ առաջինն է:

Սուլթանը, Օսմանեան պետութեան գահակալը, Մահմեդի փոխանորդը, իւր գահը պահպանելու համար, մի պատկաճագիր է գրում, և ո՞ւմ, ո՞չ թէ մի որ և է իրեն հաւասար գահակալի, այլ Անգլիայի մի պետական մարզու՝ լորդ Սոլեսբերիին, «ազնիւ խօսք է տալիս», որ հայաստանում կը մտցնի ըէֆօրմներ և խնդրում է հաւատալ իր խօսքին և «յօգուտ իրեն ու իր երկրին մի ճառ խօսել»:

Ինչ անկումն, որքան ստորութիւն մի գահակալի, մի ամբողջ պետութեան համար: Այդ նամակը մի փառաւոր դօկումէնտ է, որ աւելի քան որոշ կերպով հաստատում է և այն էլ պաշտօնապէս, հրապարակով, Օսմանեան պետութեան բարոյապէս ոչնչանալը:

Այդ նամակը նորից, բայց աւելի դրական կերպով քան մի այլ բան, հաստատում է, որ Օսմանեան պետութիւնը միանգամայն զրկած է ներքին բարոյական ոյժից, որ նա ապրում է շնորհիւ ճակատագրի:

Այդ նամակը միաժամանակ մի այնպիսի փառաւոր ապտակ է սուլթանին և իւր կառավարութեան, որ նրանք իրենց ամբողջ կեանքում, իրենց երկարատե գոյութեան շրջանում երբէք չեն տեսած, չեն կրած: Եւ այս ապտակը նա ստանում է հայ ժողովրդից, այո՛, հայ ժողովրդից, որովհետև նա է թշնամուն այս վիճակին ենթարկել: Հայ ժողովուրդը ունի այնքան բարոյական ոյժ, որ կարողանում է դիմադրել բոլոր արհաւիրքին, և ընդդիմադրելով, խեղդել, մեռցրել է նրանց մէջ մարդկային արժանաւորութիւնը, պետական պատիւը:

Խնդիրը նրանումն է, թէ դա մի միջոց է նորից խաբելու, իր ասածն անելու, թէ դա մի ստոր, անամթ մեքենայութիւն է, այդ ինքն ըստիցեան, այլ նրանում, որ դա՛ այդ փաստը, հաստատում է, թէ

Թշնամին գլուխը կորցրել է, թէ Օսմանեան պետութիւնը մեռնում է, թէ նա բարոյապէս բոլորովին սնանկացել է, որ Օսմանեան պետութիւնը, իբրև պետութիւն, այլևս կորած է: Դա ամենանշանաւոր պատմական դժուարեանն է:

Մասնացոյց լինելով այս նշանաւոր փաստի վրայ, դա համարելով մի փառաւոր ապտակ և մինչև իսկ մի յաղթութիւն, եթէ կուզէք, մենք երբէք յանցանք չենք գործիլ ասելու, թէ կարող ենք շունչ քաշել այժմ. ոչ այդ հայ ժողովուրդի կեանքի մէջ փոփոխութիւն չէ մտցընում. նա՛ ժողովուրդը չի բաւականանալ թշնամուն բարոյապէս մեռնելով. նա պահանջում է թշնամու ոչնչանալը, նա պահանջում է, որ ոճրագործը իւր պատիժը ստանայ, որ մահապարտի մահան պատիժը գործադրուի, դրանով միայն նա կարող է ձեռք բերել իւր ուզածը: Քանի այդ չէ եղել, արեան հոսանքները չեն դադարիլ և ամբողջ Օսմանեան պետութիւնը կը հըրդելի: Տեղի ունեցող դէպքերը այդ պարզապէս հաստատում են. —

Հայկական տարրը ամբողջապէս ոտքի վրայ է ու որտեղ ոյժ ունի, նա արտայայտում է իւր դժգոհութիւնը, նա արտայայտում է իւր թշնամական վերաբերումը դէպի ներկայ կառավարութիւնը: Տաճկահայաստանի հայաբնակ բոլոր գաւառները ոտքի կանգնելուց յետոյ, այսօր Զէյթունն է նորից սկսում իւր նախկին հերոսական գործողութիւնները, որոնք երբէք չեն հանդէսէլ, որոնք ամեն մի դիպածում արտայայտուել են, թէև վերջին թամանակ թշնամին խորամանկութեամբ կարողացել էր մի ծանր վէրք տալ արի Զէյթունին ու նրա հերոս Պապիկ-իշխանին: Բայց այդ վէրքը մահացու չէր և Զէյթունը այսօր նորից ոտի է կանգնում ու մի քանի ընդհարումից յետոյ ըստ իր սովորութեան յաղթութիւններ է տանում: Զէյթունի իւրաքանչիւր ապառաժը, իւրաքանչիւր քարը յաճախ կրել է թշնամու գնդակի հարւածը ու անդրադարձրել. նա վաղուց սովոր է արեան, կարմիր արեան:

Արեւոյ, որ նոյնպէս հնազանդ ու հաւատարիմ զաւակը չէ սուլթանի կառավարութեան, նորից ոտի է կանգնել, նորից բարձրացրել է պատմութեան դրոշակը, իսկ արաբները ու դրուզները դուրս են քշել սուլթանի կառավարութեան զօրքը և երկրին տիրել: Մակեդոնիան հարւածը կրելուց յետոյ, առողջանում է և ահա վաղը նա էլ ոտի վրայ կը լինի: Ի հարկէ այս փաստերը յօգուտ սուլթանական կառավարութեան չեն, այլ որ Օսմանեան պետութեան մէջ հրդեհը սկսում է, որով և արևելեան հարցը իւր սպառնալից կերպարանքն է առնում:

Այո, այսօր Հայաստանի սարսափելի խնդիրը, ինչպէս արտայայտեց լորդ Սոլիսբերիին, արևելեան խնդրի պայթեցնող ոյժն է: Եւ այսօր Օսմանեան պետութեան ջրերում պատերազմանաւերով զբօսանքներ կատարող վեց մեծ պետութիւնները, որոնց հետեւել է և Ամերիկան, ուղարկելով իւր պատերազմանաւերը ևս Օսմանեան պետութեան ջրերը, եթէ առ ոչինչ կը համարեն հազարաւոր նահատակների արիւնը և աւերակ դարձած երկիրը ու միայն իրենց շահերով կը ղեկավարեն, եթէ կը կաշառւեն սուլթանի մի նամակով և ամեն ինչ երեսի վրայ կը թողնեն, հրդեհը իւր ամբողջութեամբ շատ բան կը լափի...

Զ Ե Յ Թ Ո Ւ Ն Ի Ա Պ Ս Տ Ա Մ Բ Ո Ւ Թ Ի Ի Ն Ը

Յ Խ Ր Ո Պ Ա Վ Ա Ս՝ Թ Ե Ր Թ Ե Ր Ի Յ

(Հ Ե Ռ Ա Գ Ի Ր Կ Պ Ո Ւ Ս Ի Յ)

Նոյեմբեր 25-ին արիւնահեղ ընդհարումներ են տեղի ունեցել Զէյթունի և Ալզէրէն գաւառներում հայերի և տաճիկ զօրքի մէջ: Բէքանի կողմէ տեղը այրել են: Ապստամբութիւնն տարածուում է Մարաշից դէպի արևելք և հիւսիս: Հայերը ամուր կերպով բռնել են սարերի անցքերը: Մուստաֆա փաշան ունի իւր սրամադրութեան տակ միայն 15,000 մարդ. հայերը գրեթէ համահաւասար ոյժ ունին:

Դ Ա Շ Ն Ա Կ Յ Ո Ւ Թ Ե Ա Ն

Հ Ա Յ Դ Ո Ւ Կ Ա Յ Ի Ն Խ Մ Բ Ի Կ Ո Ւ Ի Ը

Ռ Ո Ւ Ս - Տ Ա Ճ Կ Ա Կ Ա Ն՝ Ս Ա Հ Մ Ա Ն Ա Գ Լ Ի Ռ Ո Ւ Մ

«Իրանահեցութեան» հրոսակալին իմբերից մին Հոկտեմբեր ամսի սկիզբներին թիւրքաց պահմանը անցկենալիս սահմանապահ զինւորների հետ ունեցել է ընդհարում:

Գիշերւան ժամի 12-ն էր և մեր խումբը, որը բաղկացած էր 33 հոգուց և թաղած էր ամբողջապէս ամենալնտիր սպառազինութեան մէջ տակաւին շարունակում էր իւր ճանապարհը: Եօթն ժամայ անընդհատ ուղևորութիւնից յետոյ սաստիկ ծարաւ և յոգնած, նա

Հազիւ բարձրացել էր մի ահագին ձոր և տարածւել սարի լանջի վրայ փոքր ինչ շունչ քաշելու համար, երբ սարի գլխում երևացին թիւրքաց սահմանապահ զինուորներ: Նրանք գիշերային հսկողութիւնից վերադառնում էին դէպի մօտակայ կորդոնը, որից առ առաւելն երեք քառորդ ժամ հեռավորութեան վրայ գտնւում էինք մենք: Խմբի յանկարծական և սարսափեցուցիչ տեսքը խորը երկիւղով կաշկանդեց նրանց մի ըստ և մեր հարցին՝ թէ ո՞վքեր են, նորա կմկմալով հազիւ կարողացան ասել, որ զինուորներ են: Այս պատասխանի վրա միաժամանակ որոտացին 33 հրացան և սար ու ձոր լըցրին արձագանքով: Տեղացող զնգահններից ազատ մնաց միմիայն մի զինուոր: Հաւարի համար շրջակայ թիւրք գիւղերից և կորդոնից սկսեց թունդ հրացանաձգութիւն, որից մենք ենթադրում էինք, թէ գործ ենք ունենալու խաժամուժ ամբոխից և կանոնաւոր զինուորներից բաղկացած սոււար մի բաղմութեան հետ: Այնուամենայնիւ անցաւ կէս ժամ էլ, դադարեց հրացանների ձայնը և մեր խումբը կատարելապէս անմնաս անյայտացաւ գիշերային մթութեան մէջ՝ դէպի իր կոչման տեղը:

Հետեւեալ օրը ծիծաղելի էր տեսնել կառավարութեան իրարանցումը: Սահմանազլտից նահանգական կառավարութեան ուղղած մի հեռագիր յայտնել էր, որ ջանփէտայիների (անձնուրացների) մի ահագին խումբ անցել է թիւրքաց սահմանը՝ մտադրութիւն ունենալով յարձակել կորդոնի վրայ: Ել կարող էր գուշակել տիրող սարսափը: Անմիջապէս 300 հետևակ և 100 ձիաւոր զօրք 3 թնդանօթով ուղարկեց սահմանազլուխը, բայց ո՛չ մի տեղ նրանք չհամարձակեցին խուզարկութիւն կատարել և բաւականացան միմիայն բարեկամական խորհուրդներ տալով սրան նըրան: Այնքան մեծ է ջանփէտայիների աղբած սարսափը զինուորներու վրայ, որ հենց իրանք թիւրքերը փայլուն առասպելներ են յօրինել նրանց ուժի, քանակութեան, զէնքերի և այլն մասին: Թող կատարի բարբարոս կառավարութիւնը և դիմի հազար ու մի տմարդի միջոցների՝ գանելու և ձեռք բերելու հայ յեղափոխականներին, այնուամենայնիւ նորա կը շարունակեն գործել հենց իւր քթի տակ:

Չնայած հետեւեալ օրերում տիրող խտութիւններին, խումբը հայ գիւղացիների կողմից ամենուրեք պատահեց վերին աստիճանի ոգևորւած և սիրալիր վերաբերութեան: Շտապեմ յայտնել, որ մեր ընկերը՝ տեղական գործիչը ևս միացաւ մեզ, առաջնորդելու խումբը իւր ղեկավարութեան յանձնած շրջանում (բայօնում): Տօնի և ուխտագնացութեան օրեր էին, կարծէք, հայ

ժողովրդի համար, որի կեանքում այնքան հազարէպէս են միմիջարական երևոյթներ: Համարեա՞ առաջին անգամն էր տեսնում սա հայ կամաւոր զինուորներից բաղկացած թիւրքայիսի մեծ խումբ և դրա համար իւր գոհունակութիւնը, իւր ներքին բուռն ուրախութիւնը արտայայտելիս չափազանցութիւնների էր դիմում... Թողովրդեան ամեն գասակարգի մարդիկ՝ ծերունի, կին, երիտասարդ, աղջիկ անխտիր դիմում էին գիւղում այն տները, որտեղ գտնւում էին խմբի անգամները, գէթ մի ըստ էրանց տեսնելու և քաղցր զրից անելու համար: Աւելի սրտառուչ էր մանաւանդ հայ կանանց վերաբերութիւնը, որոնք իրանց պահած ազիզ թիւրքաներով աշխատում էին կերակրել շարունակ խմբին: Ամբողջ գիշերը և ցերեկը՝ գիւղերի անգէն, այլ կարծեք երիտասարդները, իբրև պահապաններ, ցրւում գիւղից դուրս, այս կամ այն կէտերի վրայ տեսնելու համար թէ ո՞վքեր են երևում ճանապարհների վրայ:

Գիւղական հասարակութիւնները ամեն տեղ մեզ ճանապարհ էին դրում բուռն ոգևորութեամբ և անվերջ բարեմաղթութիւններով: Լինում էին ըստէներ, որ մարդ յուզմունքից արտասուում էր, լսելով հայ կանանց սրտաբուղիս բարեմաղթութիւնները խմբի յաջողութեան և ապահովութեան վերաբերմամբ երիտասարդները ամբողջ ժամանակ զբաղւած էին՝ դիտելով խմբի կարգ ու սարքը, նորա ան էին քաշում, որ սիրտ ունին, բայց դատարկ ձեռքերով ստիպւած են տեսնել իրանց թշուառ և խղճալի վիճակը:

Համարձակ կարելի է ասել, որ ժողովուրդը այժմ տալիս է մարդիկ—խսկական յեղափոխականներ, բայց նա պէտք ունի զէնքի:

Խմբի թողած տպաւորութիւնը նրա անցկացած գիւղերում, հաւատացած եւ դեռ երկար թարմ կը մնայ յիշողութիւնների մէջ:

Կ Ո Տ Ո Ր Ա Շ Ն Ե Ր

Բ Ա Ր Ե Ր Դ

Տեղացի թիւրք խուժանը, որ կատարելապէս զինւած և մանաւանդ վերջերս Պոլիս և Տրապիզոն պատահած դէպքերէն խիստ գրգռւած էր, առիթի մը կսպասեր հայերէն վրէժ լուծել:

Սեպտեմբեր 30-ին քանի մը հարիւր թիւրք լազեր շարժման նշանը տւին Խարդի գիւղախմբի՝ Քրչի թղթա-

խառն գիւղին վրայ յարձակելու: Սոսկայի ոճիրներ և աւերումներ գործելէ վերջ՝ գիւղացիին ամեն ինչն աւարի տւին: Կառավարութիւնը լսելով այս եղածները՝ տեղէն չչարժեցաւ, վասնզի այսօր ինչ որ կը կատարւի, իր դրամամբն է, և երբ ամեն բան լնցած էր, երբ աւազակ թիւրքերը իրենց բռնները բռնած էին, կառավարութիւնը իր սովորական ձեւերով թեան համաձայն՝ ուր ուրեմն խուճաք մը խօճաներ և զօրաց ջոկատ մը ուղարկեց, իբր թէ լազերը ցրելու համար, որոնք աւելի իրենց մոլեռանդ կրքին յագուրդ տալու համար եկած էին, իսկ մաս մ'ալ ընդհանրապէս ապրուստի կարօտ մարդիկ՝ ընկերակցութեամբ քաղաքիս և գիւղօրէից մոլեռանդ և արհնրուուշտ թիւրքերու գայլերու նման վոհմակներ կազմած՝ տարբեր ուղղութեամբ և անորոշ ժամանակներու մէջ կը յարձակէին հայ գիւղերու վրայ սանձարձակ ազատութեամբ:

Բաբերդ՝ զուտ հայաբնակ, իւր շուրջը ունի 29 գիւղ հայախառն և ս. Քրիստափորի անւամբ վանք մը: Ասոնք ամենքն ալ 11-12 օրուան մէջ պարբերական այցելութիւն ընդունեցին արհնարբու հրէշներու, որոնց զարհուրելի ոճիրներու գոյժը շուտ կը հասնէին մեզի:

Լուսահանք՝ զուտ հայաբնակ գիւղը, մասնաւորապէս հարւածին անտանելին ու սարսափելին կրեց: 300-էն աւելի մարդակերպ գազաններու վոհմակ մը դրացի գիւղերէն հաւաքւած, երկիցս կը յարձակին գիւղին վրայ: Առաջին անգամ գրեթէ անվնաս կը մնայ գիւղը, սակայն երկրորդին գիշերանց կարշաւեն. այդ պահուն է, որ ամենէն դժոխային տեսարանը կը պարզւի, գիշերուան մթի մէջ վայնասուններ կարճագանքեն սարէ սար... Խոտի դեզեր, յարդի մարագներ վայրկեանի մէջ բոցերու կը վերածուին, կիներ և աղջիկներ կառուանդին ու կը լլկին, դժբախտ ժողովրդին բոլոր գոյքեր և կարասիներ կը կողոպտուին, տաւարներ ու արջառներ աւարի կը տարւին: 40-50 վերաւորւած և 17-20 հոգի ալ սպանւած են: Հերիք չհամարելով այդ անլուր խժգժութիւնները, գնդակահար վերաւորեալներու կողորդը կամ որովայնը դաշոյն մկելով, անսիրտ վայրենութիւնով մը պտուտակի պէս կը դարձնէին և կոլորէին աղբքները դուրս թափթփելով. և գեռ չէին կըշտանար այդ ձիւաղները. ուրիշներ չարաչար կը տանջին սակրով (միս ծեծելու գործիք) ու դաշոյնով: Ողջ մնացածներն ալ գիւղին մօտը անտառներու, լեռներու և անձաններու մէջ կսպաստանին 5-6 օրեր անօթի և անսւաղ մնալով:

Այս պարագային մեր խմբէն քաջասիրտ մը տան մը դրանը առջև կեցած՝ ուր 40-50-էն աւելի աղջիկներ, հարսներ և տղաքներ ապաստանած էին, զէն ի ձեռին անվեհեր կերպով կը յաջողի զանոնք պաշտպանել մինչև վերջը:

Խայիկ, Պալախոռ, Աուիծկեկ երիցս կը կեղեքւին, ուր պատահած են անձի, ինչքի և հագին կորուստներ. առաջի երկու գիւղերու քահանաները անյայտ են: Պալախոռի մէջ ալ ի միջի այլոց տեղի ունեցած է քրտորմանի մահացում մը յանձին Պ. Խաչիկեանի (դեռ 3 ամիս չկայ բանտէն արձակուիլը), որուն մարմինը գնդա-

կահար ծակեկելէ վերջ գեռ կարծես գոհ չեղած, լսկրսեր են տապարով կտոր կտոր ընել ամբողջ անդամները, այն պահուն երբ տեղիս խտարէի և պիտայթի 2 անդամներն Ալի և Նէճիպ էֆէնդիներն հոն կը գրանւէին, իբր պատահականութեան առաջն առնելու նրպատակաւ:

Աուիծկայի մէջ սպանութիւններէ ետքը՝ քանի մը հայեր ալ բռնի թլփատած և զանոնք իսլամութեան հրաւիրած են: Ս. Քրիստափորի մենաստանը և իւր քով Խաչ գիւղը անդամանելի կորուստներ ունեցած են. Կիւրամելի, Աւերակ, Ալմշկայ իրենց կարգին անհամաստրէն վնասւած են՝ անձի, ինչքի, լծվար ու կթան, անասուններու և արմտիքի աւարառութեամբ: Այդ ամեն գիւղերու և վանքին մէջ գազանաբարոյ ապիրատներ կեղեցիի անօթներու ալ պիղծ ձեռքերնին դրպցուցած և անոնց արժեքաւոր ու ծանրագին մասերը կողոպտած, մնացեալներն ալ՝ սեղան, պատկեր և այլն անպատկառօրէն սրբապղծած են:

Բարիվրակ, Օձտեղ, Նիւ, Բլուր, Բլրակ, Բուշտի և Քսանեայի մէջ առեւանգութիւններ, սպանութիւններ, վերաւորումներ, ընչից ծայրայեղ յափշտակութիւններ և հրձիգութիւններ եղած են: Մնացեալ քանի մը գիւղերու մէջ ալ կը շարունակւեն և դեռ շատ բան կրսպասին: Վերջապէս երկրորդ Սասուն մը դարձած է ու կը դառնայ Բաբերդ և իր շրջակաները: 40-50 տարիներէ ի վեր այսպիսի սարսափ, կեղեքում և մահ ու կտորած երեքք էր տեսնւած. տարւած աւարներու մեծագոյն մասը հէք շինականին ձմրան կենսական պաշարն էր. ամեն բան աւելցին, տարին՝ ցորեն, ախլար, իւղ պանիր և այլն, անշուշտ մասնաւոր և յատուկ նպատակով մը, որպէս զի մնացած հայերը ամեն բանէ զերկւած անօթութեան ձիրաններու մէջ բնաջինջ ըլլան: Գիւղացիին տան անհրաժեշտ կահ կարասին կազմող խսիրի կտորներն և շնչին բաններն անգամ անհետացուցած են, իսկ այն բաները, զորս չեն կրցած հետերնին տանել, կտորած, պատռած, ջարդ ու փշուր ըրած:

Թողունք, որ թալւած գիւղերն, որ քաղաքացւոյն ջղերն կը կազմեն իրենց թշուառութեանց և տուներու ամայի աւերակաց վրայ ողբան, թողունք, որ անոնք հեծեն ու նորանոր պատահականութեանց՝ սարսափով ապրին, թողունք, որ վերջապէս անոնք լռիկ մնջիկ նախապատրաստուին մահուն՝ որ անխուսափելի է և իրենց ձակտին վրայ դրօշմած յշնորհիւ վեհ. և գթառատ սուլթանի՝: Դառնանք քաղաք և քիչ մը ալ նկատենք Բաբերդի ժամանակաւոր անդորրութիւնը: Ո՛վ գիտէ անոր ձակատագիրն ալ սեռով գրւած է գուցէ: Արդէն 11-12 օրէ ի վեր, երբ իբրանցումի սարսափն ու չարաշուք լուրը հնչեց, փակ կը մնան հայ վարժարանները, վաճառատուները և գործատուները: Եկեղեցական, արարողութիւնները առ ահի անցողակի կը կատարուին առանց ժողովորդի:

Կառավարութիւնը քանիցս մունեալներու միջոցաւ անդորրութիւն քարոզեց և ուզեց համոզել, որ ամեն մարդ զբաղի իր գործին՝ առանց մտահոգութեան և կասկածանքի, որպէս զի ժողովրդին անհոգութենէն օգ-

տւելով, իրենց նենգ դիտաւորութիւնը յաջողութեամբ ի գործ դնեն, և իրենց ընչաքաղցութիւնը յագեցնեն, աւարի տալով կեալուրին ինչքը: Բնականաբար այդ պատրաստի տակ մահն ևս այդ խժուռութեանու ձեռքին մէջ դրած իր սուր մանգաղը, պիտի փութար գործելու... Արդէն խռովայոյզ թիւրքեր զինուած անգործ և դատարկ կը շրջին արձակ համարձակ, պահակախմբեր ևս կը շրջին, սակայն անփոյթ և անտարբեր, առանց ուշադիր ըլլալ ուզելու և միջամտելու իրենց շուրջը դարձածներուն և հայութեան դէմ լարած թակարդներու ու դաւաճանութեանց: Գրեթէ կատարեալ անխշխանութիւն կը տիրէ. հասարակութիւնը ինքն է սոսիկան, հսկող, հարստահարող, կեղեքող, դատող ու դատապարտող. ուր որ հայու մը պատահին՝ կը խուզարկեն, զէնք, ժամացոյց կամ դրամ, ինչ որ ձեռքերնին անցնի կը իւրացնեն, իսկ ընդդիմացողներուն զէնքով և կռուիով կսպաննան: Քաղաքն ալ ունի իր անդարմանելի կորուստը տնտեսական և առնելիք տեսակետով: Վճարուտ իրարանցումի սարսափը ու մահաբուշակ վարկեանը գրաւած է քաղաքացոյն համակ ուշը:

Առջնորդարանի քանի մը անգոր միջամտութիւնք և նախաձեռնութիւնք ապարդիւն մնացին և կը մնան: Հոկտ. 1-ին մասնաւոր սուրհանդակով մը ասկէ Արնոյ առաջնորդին գրած նամակը ետ դարձուց կառավարութիւնը, չենք գիտեր ինչո՞ւ արդեօք, չափազանցութիւններ և կամ գրեթէ ստուերիւններ կուզէ համարել տարաբախտ գիւղերու անցքերն: Գ. բանակի հրամանատարին՝ Սասնոյ հերոս Զէքիի, կուսակալին ու առաջնորդին քաջած հեռագիրներն ալ ապարդիւն մնացին ցարդ, որով պարտաւորուած է հայն վերստին փակուած մնալ տան մէջ, քանի որ չկայ ոչ կեանքի, ոչ պատուոյ և ոչ ինչքի ապահովութիւն:

Ո՛հ, արդեօք ասոնք են Շաքիր փաշայի խոստացած Բարենորոգումները:

Ե Ր Չ Ն Կ Ա Յ

Հոկտեմբերի 9-ին տեղւոյս աստիճանի կոտորածն, եթէ մանրամասն կրեմ եղերական պատմութիւն մը կը լինի: Շատերու համոզումն այն է, թէ Սասունէն աւելի գէշ եղաւ հոս: Նախ լաւ խոստումներով և զինուորական մեծ հսկողութեամբ խաբէլ ջանացին հայ ժողովուրդը և մէկ մասը հազիւ շուկայ կրցին հանել: Ժամ. 3-ին սկսան յարձակուալը, որ աւելց 6 ժամ. ամբողջ շուկան թալլեցաւ և բազմաթիւ դիակներ ինկան: Նոյն և գիւղերուն մէջ: Գիւղերն այրեցան, ջարդեցան ու կողոպտեցան. սպաննալներու թիւն հազարը կանցնի, նոյնչափ ալ վիրաւոր: Այսօր 13 օր է, առունները այրած ցորեն ու գարի կը բերեն, ալ հետեցուցէք մնացածը: Ամբողջ Երկաջի հայ ժողովուրդը յետին աստիճան թշուառութեան մատնուած է և եթէ անմիջական

օգնութիւն մը չհասնի, մնացածներս սովամահ պիտի լինինք, եթէ նոր կոտորած մը ևս չլինի թաղերուն վրայ յարձակելով: Քաղաքին սպանելոց բոլորին վրայ սրահներու վէրք կայ, որոց լուսանկարներն առնուած են գաղտնապէս: Բոլորովին ապացուցուած է, թէ զինուորներն էին ջարդ տուողները: Անոնք, որ կը փակուէին շուկաներու բերանները զօրքերէն կիյնային, բարձր պաշտօնեաներ կը պոռային խուժանին՝ «քէսինիզ կեալուր լար», յատուկ ժամանակամիջոց որոշուած է եղեր առաջուց: Այժմ միւշիրը կը ջանայ այլ և այլ միջոցներով ինքզինքը պատասխանատուութենէ խաբսելով՝ կոտորածի պատճառը հայոց վերագրել: Բոլոր հայոց զէնքերը ուզեց՝ յայտարարելով, թէ՛ մահով օլուրսընը: «Հայ ժողովուրդը վախէն հաւաքեց զէնքերը ու յանձնեց: Այժմ ալ ազոնցմով գոհ չըլլար, Մարթին, տինամիթ ու ասպատակ խմբին տղաքը կուզէ: Խեղճ ժողովուրդը ի՞նչ տեղեկութիւն ունի ատոնցմէ: Աերջապէս միւշիրին ու իրեններուն բոլոր ծիգն այս է՝ հայ ժողովուրդը ապստամբ ու կոտորած յառաջ բերող ներկայացնել բան մը, որուն յաջողիլը անկարելի կը թւի. մի կարևոր պարագայ մտացայ գրել ի վերև, երբ նոյն օրը առաւօտ հայ ժողովուրդին մէկ մասը շուկայ կը դիմեր, խուզարկեցան ու զէնքերնին առին: Անոնք, որ յաջողած էին զէնքով շուկայ ելլել, իւրաքանչիւրը 1-4 ական թիւքը դրոյրել, Սրապեանց մաղազայէն 4 թուրք ընկան, Գ. Գարակէօզեանէ 3 թուրք ընկան, Ս Փաշալեանէ 3, Մկր. Ղուրտեանէ 1 հատ, Սակաթճի Արշակէ 2 և ուրիշ մի քանիներէ. բայց սրանք ամբողջն ալ զօրաց կողմէ խողտուեցան ու յօշոտեցան, նաև Սահակ ու Վարդան պատուական երիտասարդներ. մեռան, ծերերը հազիւ 3-4 հոգի, չարչարանաց ս. Լուսաւորչի քահանան ու Յովհ. Փափազեան վանքին մէջ մորթեր են: Աերջապէս ուր որ հայ կայ, միևնոյն գէշ վիճակին արժանացան. գիւղերուն մեծ մասը նախ թալլեցին, գիւղացիները սպանեցին, շէնքերն ալ այրեցին: Աերեկ ծրագիրն ընդունուած ըլլալով այս գործադրութիւնն էր. ի՞նչ տեսակ ծրագիր է, ի՞նչ է խեղք չը հասնիր: Մնացեալ ժողովուրդը առ հասարակ հաց կը պոռայ. հարուստ ու աղքատ չկայ, ամեն ոք հաւասար է: Երկու օր է, որ թալլուած ապրանքները առաջնորդարան կը յանձնեն. իբր թէ ամբողջ ապրանքները հաւաքեցինք, պիտի ըսին, մինչդեռ հարիւրին 3-ը չկայ: Քանի մը ականաւոր մարդիկ բանտարկեցին: Առաջն. փոխանորդին: Ետեւ ալ ճէլլ եկած էր. բաւական ժամանակ է՝ գնաց, դեռ վերադարձաւ, կարելի է այն ալ բանտարկեն, ու տակաւին շատեր ալ:

Ժամ ժամանակ չկորսուցնելով՝ անմիջական օգնութեան պիտ գալ, ապա թէ ոչ կորուած ենք բոլորս ալ: Միևնոյն սոսկալի խժուռութիւնները գործուած են նաև բոլոր շրջակայ գաւառ ու գաւառակները: Ժողովուրդը թաղերու մէջ պատերու տակ սովամահ կը դեդերի: Սա վայրկենիս մի մոռնալի կը պոռայ՝ երկուշաբթի խանութները բանալու համար: կարծես, խանութները բոց են տէ, պիտի բանան. աւերակ են:

Տ Ր Ա Պ Ի Չ Ո Ն

Քէմախէն 24-ին Հոկտեմբեր թւակիր նամակ մը կը ծանուցանէ, թէ Վերի Բաքարիզ, Վարի-Բաքարիզ, Վանք, Հուփիլ և այլ հայ գիւղեր՝ օւշիւլացի քիւրդերէն և մաս մը զինուորներէն յարձակում կրելով, գրեթէ բոլոր ուլին կործանւեցան:—Գէպքը 18 Հոկտեմբերէն սկսելով՝ երեք օր տւած է:

Հոկտեմ 25 թիւ նամակ մը ալ ստսկում ազդելով կը պատմէ, թէ ինչպէս Զօրանկճեր, Նուլան, Պարկոսէր և Շխադէկ գիւղերու քրդերն ու տաճիկներն յարձակած են Մարեգ, Գոմեր, Ուռի և այլ գիւղերու վրայ:

»Պէտք գիտնալ որ, կրսէ նամակագիրը, օր առաջ կառավարութեան կողմէ զէնք բաժնւած էր ամեն տաճիկի ու քիւրդի և խառն ամբոխի մէջ ալ ծպուած զինուորականներ ու պաշտօնեաներ կերեւային»:

—Բիթլիզէն կը գրեն՝ թէ ո՛ր և է յարաբերութիւն դադարած է:—Հոն ալ Հոկտեմբեր 12-ին ցերեկը տաճիկ խուժանը մղկիթը ժողւեցաւ գաղտնի զինւած և երբ զինուորական փողը հնչեց ու մօլլան ալ իր գրգռելու պարտքը կատարեց, հեղեղի նման յարձակեցան հայերուն վրայ և բնաւ չխնայեցին՝ որուն որ գտան:

Հոն ալ թալան, աւերում, առւանգում, ջարդ: Թէև աներէ դուրս ելնալ շատ դժուար է, սակայն ձեռնհաս ականատեսներու պատմածին նայելով՝ մօտակայ գիւղերն մարդու և կամ տղու նշան չկայ,—ամենքը անհետացած են—չգիտցիր սպանած և կորսնցուցած են, թէ ոչխարի պէս քշած տարած:

—Շատ ցաւալի է տեսնել՝ թէ ինչպէս բաբերտցի ինէր մերկ, տղաքները գիրկերնին Տրապիզոն կիջնան, ո՛ր աղի սև ծովմէն արցունքնին պիտ խառնին... 21 Հոկտեմբեր 1895 նամակով կըսէ մէկը. »2 գիտեմ՝ թէ Բաբերդի մէջ պատահած ո՛ր աղէտներն պատմեմ. տրդաքներու հաց, հաց պոռու, հարսերու և աղջիկներու կորուստը, կանանց պոռչումքը, եկեղեցիներու և դպրոցներու անոռ դառնալը, թէ արիւնով ներկւած դետինը նկարագրեմ, որոնց վրայէն պոժմ արիւնարբու գազաններն կանցնին, կը դառնան»: Կրսէ վերջապէս՝ յի՛նչ երկարցնեմ, Տուղբիլ բէկի և Լենկթեմուրի օրերն աւելի սաստկութեամբ մօտեցած են:—Մարդիկ ոչխարի պէս կը մորթուին»:

—Հոկտեմբեր 18-ին ալ Կարին զինուորները և պաշտպօղուները հայերու վրայ յարձակելով, ըրին ինչ որ կարելի էր:

—Երիզայ Հոկտեմբեր 9-ին խոշոր ջարդ մը ընելէ վերջ չը բաւեց և կրկին Հոկտեմբեր 27-ին կոտորած մ' ալ կուտան.

Վալի Քադրի պէյը կաշխատէ, որ Յ. Շահրիկեանը ո՛ր և է պատճառով մը դատապարտէ:

Տ. Խորէն քահանայէն մեծ-մեծ ճնշումներով ստորագրութիւն կորզեցին՝ թէ փաստաբան Յ. Շահրիկ-

եանը յեղափոխական է, թէ զէնք կը բաժնէ և այլն: Բահանան բանտէն ելած է և կը պատրաստուի բողոքել՝ թէ իր կամքովը չէ ստորագրած:

Շատ մը պատանիներ ալ ձերբակալելով՝ կը նեղեն և կը բանտարկեն, ու կը պահանջեն, որ երկու տղայոց տեղերն զրուցեն:

Բանտի մէջ գիշեր ատեն դուրս հանեցին Սարգիս Յակոբեան անուն 14 տարեան գեղեցկագէմ պատանին, շատ չարչարեցին, փորուն հարւածներ տւին, կախաղան հանել սպառնացին, բայց ի դուր, տղայէն խօսք մը դուրս չելաւ: Կառավարութիւնը կաշխատի, որ հայուն քով ո՛ր և է ոյժ չմնայ և բանտարկեալներուն մասին կեղծ ամբաստանագիրներ կը պատրաստեն:

—Շիտակը կուզէի մանրամասն գրել, սակայն ոտքի վրայ, աճապարանօք կը գրեմ, շատ վատ դրութեան մէջ ինկած եմ: Իրարմէ դեռ որոշ լուր չունինք:

Նամակներ հազիւ կստանանք և ուշ:

Առւանգում, ջարդ, մահ և ապականութիւնք իրար ձեռք ձեռքի տւած կը ճնշեն, կը մահացնեն յուսահատութեան անդունդը իյնող հայն:

Երկու տէրրօրիստներ պպահով են:

Բանտը 60 հոգի մնաց:

Ն Ա Մ Ա Կ Կ Պ Ո Ւ Ս Ե Ց

Հայաստանի ամեն անկիւններէն եկած նամակներ, արցունքով ու արիւնով բրւած, ընթերցողին մտքին մէջ կարթնացնեն արաբական արշաւանքին հայ պատմութեան սրտաճմլիկ էջերը: Նոյն բարբարոսութիւնները այսօր քաղաքակրթութեան ծաղկած ժամանակ աւելի անգթօքէն, աւելի գազանային կերպարանք ստացած կը կրկնեն, իրենց բոլոր արհաւիրքով պատելով հայ անտէր աշխարհը ու թշուառութեան, ողբի ու կոծի հանդիսավայր մը դարձնելով: Եւրոպան, որ ժամանակով զրկեց իր զաւակները մուսուլմանի փանատիկոսութիւնը խեղդելու համար և անչափ արիւն թափեց, այսօր ձիւաղային անտարբերութեամբ կը դիտէ նոյն ֆանատիկոսութեան դիմակի տակ գործւած հրէշային արարքը, քաղաքակրթութեան այնչափ նպաստող տարրի մը մարդակերպ գազաններու կողմէ ջնջուել, մինչդեռ անոր մէկ խօսքը բաւական էր այդ բոլորը կասեցնելու համար, սակայն այդ խօսքը չը կասեցնելէ զատ կը գօրացնէ ու կը քաջալերէ արիւնարբու ոճրագործները: Արտասահմանի ու գաղթավայրերու հայրերն ալ նոյնբան անտարբեր, թմրած, անկարեգիր դրութեան մը մատնւած են:

Ներքին գաւառները բոլորովին ոչնչանալէ վերջ կարգը Փոքր-Ասիայի հայաբնակ վայրերուն եկաւ: Սեբաստիայի կուսակալութեան հայաշատ ու բաւական բարգաւաճ գիւղերն ու քաղաքները աւերակ դարձած, ասպատակող հրոսակները բացարձակապէս կը յայտա-

րարեն, որ հայերը թալանելու բարձրագոյն հրաման ունին: Այն այն գիւղերուն, որ կը փորձեն որ և է դիմադրութիւն. կառավարական զօրքերը անմիջապէս կը հասնին ու միացած աւազակներու հետ կը յարձակին, կաւերեն գիւղը՝ Ակնայ, Տիվրիկի. Գարահիսարի ու Արաբկերի բոլոր շրջականները թալանելու բարձրագոյն հրամանը չափազանց ճշտութեամբ գործադրած է: Տուներու մէջ ինչ որ կայ, մինչև աւելներն ու ջրի ամանները, տարած են. ուտելիքներէ, ինչ որ կրնային, տարած ու մնացածը ոչնչացուցած են. բոլոր մարդիկ այր թէ կին մերկացուցած են, շատ կիներու ու տղաքներու պատիւը բռնաբարւած է. եկեղեցիներ քանդուած, պատկերներ, ջահեր ու սեղաններ ջարդ ու փշուր եղած են: Շատ մը գիւղերու բնակիչներ մասամբ սպանուած են ու մասամբ ցրուած են, ուրիշներ թողած այլևս անբնակելի դարձած տուները քարայրներու մէջ ապաստանած, ցուրտի դէմ անպատասպար մերկ, անօթի ու ծարաւ ժամէ ժամ մահուան կապսին՝ միշտ նորանոր յարձակումներէ երկիւղ կրելով: Քարայրներու մէջ «մայրիկ ու հայրիկ» ըսող աղաղակներու ձայնը երկինք կը բարձրանայ. ոչ երկինք կը լսէ, ոչ ալ ուրիշ երկիրներու մէջ եղողները. յուսալ և սպասելն ալ անցաւ:


Մինչդեռ մէկ կողմէն դժբախտ պանդուխտներ խաներու անկիւնները կծկտած արիւն արցունքով իրենց հայրենիքէն եկած նամակները կը կարդան ու յուսահատ աղաղակներով կամարներու քարերը կը լացնեն, Պոլսի աղստո, փչացած, անազնիւ ու դաւաճան խումբաբերութիւնները իրենց լրագրներուն սինեակներու մէջ կառավարութեան գովասանքներ կը յօրինեն. այլքան անմեղներու արեան լճերը կոխտոելով, այնքան սուրբ զոհերու յիշատակը անպատելով, կուզեն նեցուկ դառնալ իրենց եղիելի եղբայրներու արեան ծարաւի գազան սուլթանին: Երբ հայութիւնը կը ջնջւի Թիւրքիայի միջէն, որի համար կապրին Պոլսի հայ լրագրիւնները, ինչ ծառայութիւն մատուցին մինչև հիմայ և ինչ պիտի կրնան ընել այսուհետեւ: Իրենց անձը գաղափարէն, իրենց ետը հանրութենէն ու սկզբունքէն բարձր համարող ու հազարաւոր զոհերու յիշատակն անպատուող այս գծուծ սև արարածներուն հետ անշուշտ պատշաճապէս պիտի վարին յեղափոխականները: Բայց մինչև այդ ժողովուրդը պէտք է իր դատաստանն ընէ, զլանալով ամեն քաջալերութիւն այդ ազգագրաւ, հայրենաստեաց լրագրութեան: Նազմ փաշան պատրիարքը ու խմբագրները կոչելով, պատուիրած է, որ աշխատեն մտքերը հանդարտեցնելու ու երկու ժողովուրդներու մէջ յառաջ եկած ցրտութիւնը վերցնելու: Հայութիւնը երկրին մէջ այս աստիճանի հասնելէ վերջ, բանաւոր է կառավարութեան ձեռնարկը, բայց միթէ մնացած հայերու համար կարելի է այլևս հաշտուել անոր հետ: Պատրիարքը այս մասին որ և է բան չըրաւ, բայց լրագրութիւնը աղտոտեցաւ թաթիւներով իր գրիչը եղբայրներու արեան մէջ:

Կառավարութիւնը, կարծես, խոր քունէ մը արթնցած ու նոր ուշաբերածի պէս, իբրև թէ հարիւր քսան թապուր զինուոր գէնքի է կանչած Անատոլի մէջ կար-

գը վերահաստատելու համար: Եւ այս սովալուկ արարածները պիտի երթան Հայաստանի մէջ կարգը վերահաստատել—իսպառ ջնջելով հոն մնացած հայութեան վերջին բեկորները...

Պոլիս ալ սարսափը կը շարունակւի, հակառակ լրագրներու մէջ տեղացող պաշտօնական զեկուցումներուն, որոնք ընթերցողներու ծիծաղը կը շարժեն: Թուրքերը կը շարունակեն զինել ու սոսկալի սպառնալիքներ ընել. Պոլսոյ մէջ ալ նոր ջարդի երկիւղ կայ. նշաններ չեն պակսեր ասոր: Քանի օրէ ի վեր Բերայի հայ տունները կը նշանակուին. ամեն թաղերէ հայեր Բերայ կը դիմեն՝ կարծելով հոն ապահովութիւն գրտնել: Երեկ պաշտօնական զեկուցում մը կը ծանուցանէր, որ այդ տուններու նշանակելը խռովարարներու կողմէ է և թէ կառավարութիւնը կը հետապնդէ զանոնք ու ձերբակալելով՝ պիտ պատժէ: Ձերբակալութիւններ կը շարունակուին, բանտարկուածներ կաքսորին՝ հաւանականաբար ծովին տակ: Անմիտ ու թեթևսորիկ արարածներ տակաւին զուր յոյսերով կուզեն օրօրիլ ու զբաղեցնել ժողովուրդը: Կը գտնուին նաև ապուշներ, որք թէ կարծելով երկրին մէջ կառավարութիւն կայ կը դիմեն անոր աղերսելով, որ իրենց վիճակին դարման տանի: Բինկեանցի պանդուխտներէն ոմանք, որոնք ամենայն իրաւամբ կրնանք լրբերու հաւասար նկատել, իրենց գիւղին աւերման լուրն առնելով և համոզուած ըլլալով, որ այդ եղած է բարձրագոյն հրամանով, մոռցած իրենց հայութիւնը ու ներկայ տաշնապալից ժամանակ, իրենց սրբազան պարտականութիւնը, աղերսագրով մը դիմած են սադրազամին, իրենց վիճակին գթութիւն հայցելով, մինչդեռ անդին իրենց եղբայրները մերկ ու անօթի լաւ կը համարեն մեռնիլ իրենց քարերուն վրայ, քան դազան սուլթանին երևակայական գթութեանը դիմել:

Արիւն, կրակ ու աւերում, ահա ինչոր այսօր կը պատկերացնէ թշուառ Հայաստանը: Ձմեռն արդէն սկսուած է, հոն ժողովրդի մնացորդը ցուրտէն անպատրաստ պար պիտի կոտորուի: Գարնան Հայաստանի անթիւ աւերակները անմեղ հայերու արեան հոտերը պիտի բուրեն: Մեզ կը մնայ բոլոր եռանդով աշխատել ու եթէ անկարելի ըլլայ թշուառութիւնը դարմանել, գոնէ մեր եղբայրներու վրէժը լուծենք: Արդէն հոս հոն, մութ խորշերու մէջ ահաւոր ուխտեր կը լլան: Ա՛լ հերիք է, հերիք անտարբեր մնանք, ամեն կողմէ օգնութիւն, վրէժ կաղաղակեն:



Ն Ա Մ Ա Կ Բ Ի Ն Կ Ե Ա Ն Ի Յ

Բարենորոգումներու ծրագիրը փորձանք եղաւ մեր գլխուն, բարով խերով չըլլար: Կառավարութիւնը քանի մը օրուան մէջ ամբողջ Հայաստանը քարոզքանդ ըրաւ, այն կառավարութիւնը, որ 17 տարուան մէջ մազի չափ բարենորոգում չլրացաւ իրագործել:

Այժմ կոտորածի կարգը եկաւ Անի բոլորը եղած հայ գիւղերուն, որոնք արդէն տնտեսապէս աննախանձելի վիճակ մը ունէին:

Այդ գիւղերէն մին, Բինկեան, Եփրատի եզերքը ժայռուտ դիրքի մը վրայ շինուած, տեսնելով իր դրացի հայրենակիցներու կրած զոհանքները, անգթութիւնները, ինքն ալ մասնաւորապէս կը գուշակէր իր գըլխուն դալիքը և յուսահատ դիրք մը բռնած էր:

Արդարև Հոկտեմբերի 20-ին, առտւան ժամը 2-ին Եփրատի միւս կողմէն չայլմանցի, նորտեմցի, ապրանցի և այլ գիւղերէն՝ քրդերու և թուրքերու ահաբեկ թաղամութիւն մը յարձակեցան և սկսան կարկուտի պէս գնդակ տեղալ մեր գիւղի վրայ, վճռած ըլլալով Բինկեանը աւերակ ընել: Հայերը արդէն անգէն, շատերը առ ահի լեռները ապաստանեցան: Քրդերը ներս խուժեցին, տուներու դռները խորտակեցին և սկսան աւարառութեան. սպանեցին 7 հոգի, և վերաւորեցին 50 հոգի, որոնցմէ շատերը մահամերձ են: Տունները թալանի տալէն, այրել ու կիները մերկ ձգելէն յետոյ, մտան եկեղեցին, կողոպտեցին, սրբապղծեցին և խորանները ջարդ ու փշուր ըրին. իսկ քահանան անպատեցին: Ապա գիւղին բոլոր արջառները, գրաստները քշեցին, տարին: Օղերը ցրտացած են, շատերը լեռները փախած, կուպան նոր յարձակումի մը: Գիւղը մնացողներն ալ դուրս չեն կրնար հընել, որովհետև ամեն կողմէ պաշարուած են. աւաղ, անոնք ալ թըշառութեան ձիրաններուն տակ պիտի անշնչանան ընդհուպ:

Այս յարձակման ժամանակ 15 փոստայի զօրքեր միացան քրդերու, և յատուկ զօրախումբ մըն ալ կազմ ու պատրաստ կեցած էր քրդերուն օգնութեան հասնելու համար, եթէ ո՛ր և է դիմադրութիւն մը կրէին հայերէն:

Երրորդ յարձակումով փորձեցին գիւղը կրակի տալ. հրդեհը ահաբեկ աւեր սփռեց, որոնցմէ ծուխեր ու հառաչներ կը բարձրանան մեր «գթառատ սուլթանին» դահլ խնկարկելու համար, և թշուառներ իբրև ուրևականներ խելայել ման կուգան, անէնք թափելով երկրի գլխուն...

Շրջակայ գիւղերէն Արմաթախ, Բարդամ, Օղուս, Ալոշէն ևս յարձակում կրեցին. իրենց անասունները և գոյքերը թալանուեցան. այժմ կոտորածի փողին կապասլի: Ժողովուրդը ահ ու սարսափի մէջ է, կառավարութիւնը մեր բողոքներուն ականջ չը դնէր. քրդերը յայտնի կը խոստովանին թէ կառավարութեան թղթաւութիւնով կրնան:

Սով, հիւանդութիւն և մահատարածամ՝ երեք ուրևականներ, որոնք աչալուրջ կը հսկեն Բինկեանի միացող աւերակներուն վրայ:

ՆՆՈՐԱՏՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒ ՑՈՒՑԱԿԸ

Կարնոյ Անտրոն. Կոմիտէի սնդուկի մէջ ստացուած են. Հիւրհոգից 20 օսմ. ոսկի, Պարթևեան 800 դահեկան, Պահլաւից 50 օսմ. ոսկի, Մանդակունի 50 օսմ. ոսկի, Համակրող արհեստաւոր մը 2 օսմ. ոսկի, Վարդան 15 օսմ. ոսկի, Խուրո 15 օսմ. ոսկի, Կաղումը 2էլբրի 15 օսմ. ոսկի, Քաջբերունի 50 օսմ. ոսկի, Պահլաունի 15 օսմ. ոսկի, Հրանտ 5 օսմ. ոսկի, Վազեան 5 օսմ. ոսկի, Մուրադեան 15 օսմ. ոսկի:

Սլաքեան 55 դահեկ. 30 փարա, Կայծակ 63 դահ. Փայլակ 160 դհ. 20 փարա, Սարհադ 70 դհ. 20 փր. ևս 115 դհ., Վարդանեան 246 դհ., Փայլակ 100 դհ. Կայծակ 70 դհ., Սլաք 200 դհ. 20 փարա:

Վիշապ քաղաքի Կեդր. սնդ. մէջ ստացուած են.

Տեղական՝ Վարդ 10 դահեկան, Յոթ 20 դհ., Ոմ 20 դհ., Լուսնթագ 30 դհ., Սև-Կարմիր 76 դհ. ևս 20 դհ., օր. Հայրենասէր 57 և կէս դհ., Մասիս 45 դհ. Մուխ 10 դհ., Եղբայր 20 դհ.:

Օձէն՝ Արծիւ 40 դհ., Թրքատեաց 59 դհ., Գնդակներ 138 դհ. ևս 170 դհ., Մանուկ 6480 դհ., Շանթ 35 դհ., Ծխափայտ 108 դհ., Անկում 160 դհ., Ռուպէստն 324 դհ., Գ. Կայծակ 540 դհ., Լուսին 540 դհ., Նարինջ 540 դհ., 2. քաղաքի Վահանեան խմբից 540 դհ., Յօժարակամ 1080 դհ.:

Ապառաժէն՝ Ս. Ք. 15 դհ., Ն. Մ. 20 դհ., Գ. Ծ. 47 և կէս դհ., Յ. Ի. 20 դհ., Յ. Կ. 168 դհ., Ս. Զ. 108 դհ., Կ. Կ. 108 դհ., Յ. Փ. 97 և կէս դհ., Ն. Կ. 108 դհ., Տ Ա.-ի ձեռքով 65 դհ.:

Արշակաւան քաղ. Կեդր. սնդ. մէջ ստացուած են.

Արշայր խ. 25 դհ., Թաթուլ խ. 100 դհ., Ասպատակ 25 դհ., Հով 20 դհ., Աւետիս Խաչատուր, 100 դհ., Սահակ Ե. 20 դհ., Ենիչէրի խ. 186 դհ., Արծիւ խ. 180 դհ., Ռուբինեան խ. 80 դհ., Տ. Տիրուհի 23 ֆր. Վանական 20 դհ., Սերովբէ 20 դհ.:

Հիւսիս. Ամերիկ-ի Պրովիդ. ք-ից՝ Ղ. Պ. 2 դոլլար: Բոլգարիայի Եամպոլ ք-ի Դաշնակց. «Մասունեան» Կոմիտէից 300 ֆրանկ, Բ. քաղ-ից Շաւարշի միջոցով 300 ֆրանկ:

Ռուսներ. ի Բրայլ. ք-ից՝ Բ. Ի. 400 ֆրանկ, Մ. Ան. 20 ֆր., Դաշնակց. «Բանուր» խմբից 27 ֆր., «Հրացան» խմբից 10 ֆրանկ:

Բերլին՝ Աւազեանից 1260 ֆրանկ 90 սանտիմ:

Թիւրքիստանութիւնների տեղիք չտալու համար, ստիպուած ենք մեր նոր հասցէն դարձնել «ԱՐՄԵՆ-ԳԱՍՊԱՐ», որի վրայ հրաւիրում ենք առանձին ուշադրութիւն.


Դաշնակցութեան անձամբներից խնդրում է թղթաւցութեան նւ Ներսիսութեան համար դիմել.

Armène-Gaspar, poste restante, Carouge (Suisse).

L. Boole, 15, Augustus Rd. Hammersmith, W. London.

Վիեննա, Դաշնակցութեան ազատ սպարան:

ԴՐՕՇԵԿ



„ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ“ ՕՐԳԱՆ

Պ Ի Տ Ի Ո Չ Ն Չ Ա Ն Ա Յ

Թշնամին իր ծրագիրը գործադրեց—նա կոտորեց: Կոտորեց և այն էլ անամօթ ու տմարդի միջոցով: Սուլթանի կազմակերպած կառավարութիւնը դուրս եկաւ հայ ժողովրդի դիմաց ամենաստոր և ամենալիրը կերպով: Նա յանդգնութիւն չունեցաւ ճակատ առ ճակատ կուռելու և դիմեց խորամանկ միջոցների—նախ զանազան պատրւակներով ու պատճառաբանութիւններով խաբեց ու ժողովրդից խլեց զէնքերը և ապա ապահովացնելով, միամտացնելով, յարձակեց յանկարծակի անպատրաստ ու անզէն ժողովրդի վրայ և կոտորեց թէ զօրքի և թէ իր զինած ամբոխի միջոցով: Եւ ե՛նչ կարելի է անել այսպիսի մի անպատկառ, ստորաբարձ թշնամու հետ, այն թշնամու, որ միայն ընդունակ է դարանից յարձակել, թիկունքից խփել: Մի՛ արհամարանք, զգուցրով մի թո՛ւք նրա ճակատին... ո՛չ, նա՛ այդ ստորը դրան անգամ՝ արժան չէ: Բայց այդ թշառականի գոյութիւնը մի չարիք է, դրա գոյութեան հետ անխղճի կերպով կապւած են Տաճկահայաստանում տեղի ունեցող բոլոր այն տանջանքներն ու չարչարանքները, այն անպատուութիւններն ու անպատկառութիւնները, որոնք մատչելի են հարեմի ու ներքինիների լակոտների երևակայութեան: Եւ իբր այդպիսին, նրան պիտի ոչնչացնել, և նա կը ոչնչանայ:

Այժմ նա՛ մեր թշնամին հոգևարք դրութեան մէջ միայն յուսահատական ցնցումներ ու խռպոտ ձայներ է հանում, այդ մեռնող թշառականի կեանքի ըրպէները համրւած են, որքան էլ դիպլոմատ-բժիշկները գործ դնեն միջոցներ՝ նրան ապրեցնելու կամ կեանքը աւելի երկարեցնելու, քան նա ապրելու կենսական ոյժ ունի:

Պատմութիւնը իւր վերջնական խօսքը ասել է—սուլթանի կառավարութիւնը պիտի ոչնչանայ, այս դիպուածում մարդկային ոյժը թոյլ է, նա այլ ևս ոչինչ ա-

նել չի կարող և սև յիշատակ ունեցող թշառական հիւանդը պիտի մեռնի:

Մեր առածը ապացուցանելու համար մենք ոչ մի դժարութեան չենք հանդիպում, փաստերը թարմ ու կենդանի են, ամենաբուր յիշողութիւն ունեցողն անգամ կարող է յիշել ու հասկանալ. մեզ միայն կը մնայ մատնացոյց լինել թէ պատմութեան վրայ և թէ մեր օրերում ու ներկայ ըրպէյում տեղի ունեցող փաստերի վրայ: Ու պիտի ասենք, որ ինքը՝ սուլթանի կառավարութիւնը ոչ պակաս ուժեղ կերպով նպաստում է իւր կացութիւնը ծանրացնելու, իւր մահը արագացնելու: Ամեն օր, ամեն քայլում նա գործում է քաղաքական սխալներ. նա վստահ իւր հարեմական խորամանկութեան, անպատկառութեան ու անպատուասիրութեան վրայ, վստահ եւրոպական պետութիւնների անհաշտութեան վրայ, շարունակում է լիբր ու տմարդի կոտորածը մի կողմից, իսկ մեւ կողմից խրախուսած մէկից, ընդդիմադրում է պետութիւնների պահանջին: Շնորհիւ այդ հանգամանքի, սուլթանական կառավարութեան քաղաքական յարաբերութիւնները ոչ միայն չեն փոխւել, այլ նրանք աւելի բարդւում, աւելի լարւում են:

Սուլթանական կառավարութեան ծնունդը եղել է բիրդ ոյժը, բիրդ ոյժով, կոտորած անելով նոյնպէս նա տիրեց շատ երկիրներ, բազմաթիւ ժողովուրդներ և իբրև տղուկ ծծեց նրանց արիւնը, կեղեքեց, ոտի տակ տըլաւ նրանց մարդկային պատիւը, կեղտոտեց, անպատեց ինչ որ մաքուր, անարատ էր նրանց համար. բիրդ ոյժով նա ընկաւ, բիրդ ոյժով էլ կը մեռնի, որովհետև երկար տարիներ է, որ նա ապրում է մարդկային դիակների վրայ բարձրացած, որովհետև բռնակալութիւնը յաւիտենական չէ. նրան վիճակւած է ոչնչանալ, նրա, մարդկային կեանքի այդ հրէշի մահը անխուսափելի է:

Հատ բռնակալ պետութիւններ աւելի հանճարեղ, աւելի ուժեղ՝ քան ներկայիսներն են, ոչնչացել, անհետացել են և այսօր նրանց դիակների վրայ բարձրացել է ժո-

ղովուրդը այդպէս էլ կը լինի ներկայ բռնակալ պետութիւնների հետ: Որքան էլ որ ժողովուրդը թոյլ լինի, որքան էլ որ նրան կոտորեն, բայց և այնպէս յաղթողը՝ ժողովուրդն է լինելու, որովհետև բռնակալներին կեանք տուող ինքը ժողովուրդն է, և երբ վերջինն հրաժարում է այլ ևս նրան ծառայել, երբ ժողովուրդի մէջ զարգանում է գիտակցական կեանքը, նոյն ժամանակ մեռնում է բռնակալը:

Ինչպէս որ բռնակալների գոյութիւնը մի չարիք է, նոյպէս մի չարիք է և նրանց մահը, բայց ժամանակաւոր: Բռնակալը հեշտութեամբ չի մեռնում, նա սիրում է իւր շունչը փչել աւերակների ու դիակների վրայ ընկած, նա սիրում է խեղդել արեան մէջ:

Ահա այդ բռնակալներից մէկը, սուլթանի կառավարութիւնը կատարում է Տաճկահայաստանի սարսափները: Դրանք, այդ սարսափները ու նախճիրները պարզապէս նրա մահուան ապացոյցներն են և նա կը մեռնի: Այդպէս են մեռել բոլոր բռնակալութիւնները. այդ է պատմութեան օրէնքը, այդ է մարդկութեան պահանջը...

Պատմութիւնը լինելով տանջող, չարչարանք կրող ժողովուրդի կողմը, ժողովուրդը այլ ևս անյաղթելի է. այստեղ միայն ժամանակի խնդիր կարող է լինել, աւելի ոչինչ. վերջնական յաղթութիւնը, կեանքը պատկանում է ժողովուրդին և ոչ բռնակալութեան:

Հայ ժողովուրդը ու հայ յեղափոխականները խրախուսւած սրանով ու յենւած իրենց բարոյական ոյժի վրայ, մի րոպէ անգամ չեն ընկճւիլ այն սարսափների, այն նախճիրների առաջ, որ այսօր տեղի են ունենում թշուառ Տաճկահայաստանում, այլ լցւած վրէժխնդրական ոգով, կը շարունակեն կռիւը՝ թշնամուն պատժելու ու ձեռք բերելու իրենց ըղձացածը:

Եւ ահա ներքին նահանգներում սկսւում են հայդուկային գործողութիւնները. առաջին անգամից սարսափահար եղած ժողովուրդը գիտակցութեան է դալիս և իւր յեղափոխական զաւակների աջակցութեամբ շարունակում է ընդգիմարութիւնը: Կիլիկիան իւր ներկայացուցչի՝ Չէյթունի միջոցով ապստամբւում է, յաջողութեամբ դիմադրում թշնամուն, յաղթութիւններ է տանում և մինչև իսկ նրան մարդավարութեան դասեր է տալիս: Այսպէս էլ կը շարունակւի, մինչև որ թշնամին զինաթափ կը լինի, մինչև նա տեղի կը տայ. հպարտակ դիպածում մի րոպէ անգամ չի դադարելու ներկայ կռիւը, և որքան էլ նա թանգ նստի ժողովուրդին:

Բռնակալութիւնը պիտի ոչնչանայ:

Չ Ե Յ Թ Ո Ւ Ն Ի Ա Պ Ս Տ Ա Մ Բ Ո Ւ Թ Ի Ի Ն Ը

Ե Ն Ր Ո Պ Ա Ն Ա Ն Թ Ե Ր Թ Ե Ր Ի Ց

(Հ Ե Ռ Ա Գ Ի Ր Ն Ե Ր Կ Պ Ո Լ Ս Ի Յ)

Հայերը յարձակել են Էնդերնէի գաւառակի վրայ և այրել ու աւերել են շրջակայ գիւղերը: Զօրք է ուղարկւած՝ ապստամբութիւնը ճնշելու:

* *

Զէյթունն ուղարկած զօրքը՝ գանելով Համիդիէ կողմէ կամուրջը քանդւած, յետ է նահանջել: Ապստամբները արգէն տիրել են Իսմայիլ, Թիսուքիւր, Հիսար և Դէնժէն գիւղերին. նոքա նոյնպէս տիրել են Գաբանի հինգ գիւղերին և արշաւում են դէպի Ադանա:

* *

Զէյթունցիները տիրելով Զէյթունի ամրոցին, գրաւելով զօրքի զէնքերը, ռազմամթերքը և 3 հատ կրուպի թնդանօթ, թշնամուն մարդասիրութեան դաս են տւել՝ կալանաւորների հետ վարւելով մարդասիրաբար և, մինչև իսկ, ուսումնարանները դնելով նրանց սպաների տրամադրութեան տակ՝ միջոց տալով աւելի հանգիստ ապրելու:

Դ Ա Շ Ն Ա Կ Յ Ո Ւ Թ Ե Ա Ն

Հ Ա Յ Դ Ա Ի Կ Ա Յ Ի Ն Խ Մ Բ Ի Կ Դ Ի Ի Ը

Վ Ա Ս Պ Ո Ւ Ի Ր Ա Կ Ա Ն Ո Ւ Մ

Հայդուկային խումբը 60 հոգուց բաղկացած հազիւ սահմանագրութիւն անցած՝ Սարա. աււած գայմազամութեան մօտերը, կը պատահի Համիդիէ զինւորների մի խմբին և կոկսի սաստիկ կռիւ: Շատ նշանաւոր քրդեր են սպանւել, իսկ հայդուկներից ընկել են երկու հոգի: Հայդուկները յաղթող հանդիսանալով՝ թշնամուն լաւ ջարդ տալուց յետոյ, շարունակում են ճանապարհը և հասնելով Աշարէի և Քօղազ-քեասանի մօտերը, յանկարծ սրանց առաջն է դուրս գալիս Զնդի անունով քիւրդ հազարապետը իւր զօրքով և շրջակայ քիւրդերով. ընդհարման մասին նա լուր է առած լինում և շտապում է հայդուկների առաջը բռնել՝ կամ կոտորելու, կամ գերի առնելու: Եւ ահա նորից սկսւում է կռիւը. քիւրդերի կողմից ընկածների թիւը

շատ է, որոնց մէջ կան մի քանի հարիւրապետներ և տասնապետներ և ինքը՝ հազարապետ Ջնդին:

Մանրամասն տեղեկութիւն անձնագոհ հայրուկների վիճակի մասին պակասում է: Թէև ամեն կողմից ճշնշումներ են գործ դնում, բայց յուսով ենք, շուտով տեղեկութիւններ ստանալու ու հաղորդելու:

Ն Ա Մ Ա Կ Կ Ա Ր Ի Ն Ի Յ

Կոտորածի նկարագրութիւնը ձեզ հասած կը լինի արդէն *): Ես ալ կուզեմ գրել այդ մասին, միայն ի՞նչ գրել, ի՞նչպէս սկսել, չեմ գիտեր, մնացած եմ շարած: Վերջին ժամանակներու տպաւորութիւններն այն աստիճան սաստիկ էին, որ մեր բոլորիս զգացումները բթացած են. ամենայն սառնասրտութեամբ կը լսեմք ամենասարսափելի լուրեր, որոնք ուրիշ ժամանակ կրնային մեզ խեղաբարութեան հասցնել: Ար լսեմք, օրինակ, որ Բաբերդի մէջ համարեա թէ էրիկ մարդ չէ մնացած, որ կանանց բռնաբարեր են, աշակերտներ ու ուսուցիչներ խողովոյր, վարդապետին յօշոտեր են, բայց այս բոլորն այժմ մեզ վրայ նոյն տպաւորութիւնները կը գործէ, ինչ տպաւորութիւն կը գործէր սովորական ժամանակ Բաբերդու մէջ հայու մը ծեծելու լուրը: Այս ըստէս կը գտնուինք սենեակի մը մէջ, ուր վերաւոր մը պառկած կը տանջուի վէրքէն, իսկ մենք ամենայն անհոգութեամբ կը խօսինք, մինչև իսկ կը խըմենք. «Մեր մի ընկերը դառնապէս կուլայ, որ ինքը դեռ ողջ է, դնդակահար չէ եղած»: Յիմար դրութիւն չէ՞, անանական, անզգայական կեանք չէ մի՞թէ: Բայց թողնենք այս բոլորը, պատմեմ աւելի լաւ է գլխուս եկած դէպքի մասին:

Հոկտեմբերի 18-ն էր, չորեքշաբթի օր, կէս օրէն քիչ ետքը գործի մը համար պատահամբ ընկայ թաղական դպրոցներէն մէկը: Ատկէ ետքը ճաշելու պիտի երթայի: Իմ անկանոն կեանքը փրկեց զիս այս անգամ հաստատ մահէն: Եթէ հակառակը վարուէի, այսինքն ճաշէի ու յետոյ դուրս ելնէի, այն ատեն գործըս լմնցած էր, որովհետև ճիշտ այդ պահուն սկսած էր կոտորածը, բայց մենք չգիտէինք: Փողոց դուրս ելայ թէ չէ, ամեն կողմէ դիտողութիւններ ըրին, թէ կոտորած ըլլալու է, սակայն ես վստահաբար ամենուն հաւատացնելով, որ բան մը չկայ, ճամբաս շարունակեցի: Պատահեցայ ի միջի այլոց և Յեր-Գարեգին քահանային: Նա ինձ ըսաւ, թէ դադարկ լուրեր են, սակայն զգոյշ մնալու է միշտ: Խեղճն ի՞նչ գիտէր իր գլխուն դալիքը...

Մտայ դպրոց: Բաւորդ ժամ չանցած սկսեց դպրոցին մէջ խառնաշփոթութիւն: Ուսուցչարանէն դուրս թռանք, տեսանք դրան քով կին մը, որ մազերը կը

փետէր և կը պոռար՝ «կոտորեցին, կոտորեցին»: Նոյն պահուն արիւնաթաթախ երիտասարդ մը, որ հազիւ ազատելով մահէն, ապաստարան էր գտած դպրոցին մէջ: Կասկած չկար, որ կոտորածը սկսած է... Դռներն ամուր գոցեցինք, աշակերտներու բաժինը դատարկեցինք, միացրինք աշակերտուհեաց հետ. ատրճանակները պատրաստեցինք: Բացի ինձմէ՞ կային հոն 2 ուսուցիչ, 2 վարժուհի, 3 դպրոցի ծառայողներ և մի քանի այլ անձինք: Բայց ի՞նչ ընէինք, ինչպէ՞ս լուեցնէինք 500-ի չափ մանուկներու բարձրացրած աղմուկը, լաց ու կոծը, որոնց մէջ քանի մը հոգի միայն կային 10-12 տարեկանէն վեր: Բայց մենք դեռ բան մը չէինք տեսած, ձայն մը չէինք լսած: Աշակերտներուն դասաւորելէն, քիչ մը լաց ու կոծը հանգստացնելէն ետքը բարձրացանք վերի մասը՝ շրջակայքը դիտելու: Հարևան փողոցներով անընդհատ կը վազէին լազեր, չէրքէզներ, թարաքամաներ, տեղական տաճիկներ, բեռնաւորած թալանած ապրանքով: Ար նշանակէր յարձակում էր եղած շուկաներու վրայ: Դա մեզ քիչ մը մխիթարեց, տեղիք տալով կարծելու, որ ամբողջ գլխաւորապէս թալանով է զբաղւած: Յետոյ միայն յայտնեցաւ սուկայի իրողութիւնը... Մերայնոց մէկու սիրտը չհամբերեց՝ տեսնելով ապարանք կրող լազ մը, ատրճանակը քաշեց, որ զարնէ: Մենք թոյլ չուէինք, նախ որ փամփուշտ շատ չունէինք, և երկրորդ՝ որ մենք միայնակ չէինք. մեզ հետ էին 500-ի չափ անպաշտպան արարածներ: Ատրճանակ քաշելը լաւ հետեւանք ունեցաւ: Լազը փախչելով, ամենուն հաւատացրեր էր, որ դպրոցը մեծ քանակութեամբ զինեալ մարդիկ ունի մէջը: Արդէ ետքը այլ ևս ոչ զք չհամարձակեցաւ այդ դպրոցի փողոցէն անցնել: Յաճիկ հարևանն ալ շատ բարեսիրտ եղաւ...

Շուտով լսեցինք հրացանի որոտներ: Ամեն անգամ, երբ կը լսէինք այդ որոտները, մենք կուրախանայինք, ենթադրելով միամտաբար, որ զինուորները թոյլ չեն տար խուժանին յարձակում ընելու հայ թաղերուն վրայ: Մենք ի՞նչ դիտնայինք այն ատեն, որ այդ հրացանները հայեր կը կոտորեն, որ զինուորներուն յատուկ հրահանգ է տրւած կոտորել հայերուն, ինչպէ՞ս գիտնայինք, որ խուժանը շատ քիչ դեր է խաղացեր կոտորածի ատեն, որ զօրքը, կանոնաւոր զօրքն է սկսեր կոտորածը և խուժանի համար ճանապարհ հարթել...

Հրացանների որոտները մերթ կը մօտենային մեզ, մերթ կը հեռանային: Ամեն անգամ, երբ կը մօտենային, մանուկները սարսափահար կը բարձրացնէին իրենց աղաղակը: Շատ դժուար է մանուկներու հետ միասին այդպիսի ըոպէներ անցնել. ի՞նչ միջոցներ միայն ձեռք չառինք այդ անմեղ արարածներուն հանգստութիւնը պահպանելու և վախը փարատելու համար:

Ժամը 3-ն էր, կոտորածի ամենասարսափելի ժամանակը—ինչպէս յետոյ իմացանք—երբ յանկարծ շատ մօտէն քանի մը հրացաններ որոտացին դէպի դպրոցը: «Ամբողջ յարձակում գործեց», մտածեցինք մենք և թռանք դէպի ձայների կողմը: Երեխայքը նորէն բարձրացրին իրենց ճիչը: Սակայն... անսպասելի կերպով կիսանանք, որ զինուորներն են (պատի ետևը թաքնւած)

Կսկսենք տպել յաջորդ համարիս:

Տրացան արձակողները: Ապշած մնացինք և սուսջին ան-
 դամ կասկածեցանք զինւորներու դերը: Ղերջն իմացանք,
 որ զինւորներու նպատակն է եղած իմանալ մեր ուժի
 աստիճանը. եթէ թոյլ գտնէին, ի հարկէ, հիմնայատակ
 կընէին դպրոցը: Բայց մենք այս անգամ ալ չխաբուե-
 ցանք, լուռ մնացինք, քիթներս դուրս չհանեցինք. և մի
 անգամ ևս խաբեցինք մեր թշնամուն: Ապուշները մին-
 չե վերջը համոզած մնացին, որ դպրոցը շատ լաւ զնե-
 եալ է և պատի տակէն մէկ մէկ, գաղտագողի կը դի-
 տէին դպրոցը՝ չհամարձակելով դուրս գալ:

Մութն ընկաւ: Հրացաններու ձայները զեռ կը լս-
 ւին, սակայն ոչ յաճախ: Երեխայքը կուլան ու սուռն
 կուզեն երթալ: Հանգստացնելու ոչ մի հնար չկայ: Քիչ
 մը հաց բաժնեցինք, իւրաքանչիւրին մէկ փոքրիկ պատառ:
 Հաց տալէն ու ջուր խմացնելէն ետքը, մանուկներուն
 պառկեցրինք քնանալու: Անոնք թափուցան իրարու վը-
 րայ չոր յատակին և քնեցան, կարծես գառներ էին
 իրարու քով թափած: Միւս մասը, գլխաւորապէս մե-
 ծերը մերժեցին քնել, ուզեցան արթուն մնալ մինչև
 առաւօտ: Դեռ քանի մը փոքրիկներ 6-7 տարեկան
 կուլան, կուզեն իրենց մայրերու քով երթալ: Հե-
 տաքքերը էր մի փոքրիկ մանուկ: Երբ մենք հանգըս-
 տացնելու համար կառարկէինք, թէ հոս աւելի լաւ է,
 իրենց տունը, մայրիկը աւելի անապահով են, ինչո՞ւ մա-
 նուկը սկսեց աւելի բարձրաձայն պոռալ, ասելով՝ թէ
 հենց ատոր համար ինքը կուլայ, որ մայրիկը անապա-
 հով է...

Սկսանք մեղմ, հազիւ լսելի ձայնով, տխուր երգեր
 երգել: Դա հանգստացրուց շատերուն: Աղմուկը դադարեց,
 ոմանք մնացին աշակերտներու քով, իսկ մենք բար-
 ձրացանք վերի մասը՝ շրջակայքը հսկելու:

Պարզ գիշեր էր: Երկինքը տեղ տեղ միայն ամպած:
 Լուսինը կը լուսաւորէր ամբողջ շրջակայքը: Քիչ հեռ-
 ւէն կը բարձրանան հրդեհած տներու բոցերը: Հրա-
 ցանների ձայները զեռ չեն ընդհատուր: Նոյն պահուն,
 նոյն լուսինը կը լուսաւորէ ուրիշ երկիրներ, կը մտա-
 ծէինք մենք, ուրիշ երկիրներ, ուր նա բերկրութիւն կը
 պատճառի, ուր խաղաղ, հանգիստ, անվրդով կը քա-
 լեն, կը խօսեն, կը խնդան, կը զւարճանան, չկասկածե-
 լով բնաւ, որ աշխարհիս մի այլ անկիւնում այդ պայ-
 ծառ լուսոյ շնորհիւ կը շարունակեն կոտորել, խողիտ-
 զել, սյրել, թալանել, բռնաբարել... և ուր անպաշտ-
 պան զոհերը օդը կը լեցնեն վայնասունով, աղիողորմ
 աղաղակներով ու յուսահատական ճիչերով:

Առաւօտայ դէմ ամեն ինչ խաղաղեց, կը լուսէր
 միայն շներու ձիգ ոռնոցը: Բայց լոյսը բացելուն պէս
 նորէն լուսեցան հրացաններու ձայնը: Արդեօք ի՞նչ է
 պատահել, ո՞վ է սպանել, ո՞վ է կենդանի, ահա մեր
 ամբողջ գիշերայ մտածմունքը:

Առաւօտեան եկան զօրքերը հարիւրապետի հրամա-
 նատարութեամբ, յայտնեցին, որ ապահովութիւն կը
 տիրէ այժմ, խորհուրդ տուին, որ «թէսլիմ լինենք»
 (այսինքն, անձնատուր), պատրաստականութիւն յայտնե-
 ցին՝ բոլոր ինսաղ սէլամաթ տուն հասցնել: Մենք ըս-
 կըրում չհաւատացինք և չուզեցինք «անձնատուր» լի-

նել. միայն քանի մը պարսիկներու ներկայութիւնը
 հաւատ ներշնչեց և մենք դուրս ելանք: Իսկ թէ ինչ
 իմացանք դուրս գալուց յետոյ, դրա մասին ձեզ գրած
 են:


Կ Ո Տ Ո Ր Ա Ծ Ն Ե Ր
 Կ Ա Ր Ի Ն Ի Յ

Թւէս 4 օր առաջ, Հոկտեմբերի 30 (ն. տ.) չորեք-
 շաբթի կէս օրէն ժամ 7-ին սկսեալ, յանկարծ առանց
 պատճառի թուրքերն յարձակեցան հայոց վրայ և ըսկ-
 սեցին շուկաներու մէջ կողոպտել, զարնել, կոտորել, ա-
 ւերել, տանել և մորթել. սոսկալի էր տեսարանը. ա-
 մեն որ կը փախէր, ամեն որ սոսկման մէջ էր: Գրեթէ
 բոլոր խանութները կողոպտեցին՝ քիչ բացառութեամբ
 Մինչև հիմա գերեզմանի մէջ դրւածներու թիւը 520-ի
 կը հասնի և դեռ շատեր կորուսած են և երբէք չեն
 գիտցուիր այ: Անթիւ վերաւորւածներ կան: Անկէ շա-
 րունակեցին տներու վրայ, յոյներն զատելով, ինչպէս
 նաև անոնց խանութները, կոտորեցին դռները, կողոպտե-
 ցին և թալանեցին գրեթէ բոլոր հայ տունները, սպանե-
 ցին բոլոր կրակ բացողները:

Ախ, ի՞նչ վիճակ է մեր վիճակը. 4 օր է, որ մեր շէնքը
 լի է ապաստանողներով. հարիւրներով դիմեցին մեզի և
 մենք մեր շէնքին դռներն բացինք անոնց՝ զի մեր տեղը
 ապահով էր. այսօր ոմանք մեկնեցան: Գրիչ չէ կարող
 և չկրնար նկարագրել:

Դէպքէն 10 րոպէ առաջ ես շուկան էի՝ ամենէն
 վտանգաւոր տեղը... տունը հասնելուս պէս սկսաւ
 խուզութիւնը: Տներն կողոպտելէ վերջ այրեցին և մի-
 խիրի կոյտ ըրին շատ մը տներ, իբր պատիժ ներսէն
 զէնք պարպողներուն: Բոլոր այս կողոպուտը և կոտո-
 րածը եղաւ զօրքին օգնութեամբ: Հարուստներէն շա-
 տերը կորսնցուցին իրենց տները, խանութները և
 անձերը. շատերը թէ ապրանքսին և թէ կեանքերսին
 վրայ տւին. մնացածներու ալ միայն տներն կողոպտեցան:

Ախ, եթէ հոս այսպէս է, ապա Բաղէշ ինչե՞ր ե-
 ղեր են, հիմա ինչե՞ր գործած կան հոն: Այսօր ես ան-
 ձամբ գացի հայոց գերեզմանատուն և աչքերովս տե-
 սայ այն թշառ զոհերը, որուն վիզը, որուն թիւը, ո-
 րուն ականջը կտրած էր. շատերն սպանելէն ետքը սաս-
 տիկ ալ չարչարեր են: Բազումք անձանաչելի էին դար-
 ձած ստացած վէրքերուն պատճառաւ: 2 քահանայ, 4
 տղայ, 1 երեխայ, 5 կին և 1 աղջիկ, ես աչքովս տե-
 սայ: Ով որ չէ տեսեր, չգիտեր՝ թէ ի՞նչ է անգթու-
 թիւն: Յեղիս հայութիւնը մեռաւ... ապրանք չմնաց, շա-
 տերն հարուստ էին առաւօտ և երեկոյեան մուրացիկ
 եղան:



Տ Ի Վ Ր Ի Կ

Այսպէս, որ մին ալ Տեռագիր մը եկաւ, որ կաւե-
տէր՝ թէ բարենորոգումները ընդունւած են: Մենք, որ
քսան օրէ ի վեր շարունակ անտանելի տառապանքներու
և հալածանքի մէջ կը կողկողէինք, ոչ թէ մեր ցաւե-
րուն բալասան մը եղաւ այդ աւետիսը, այլ ընդհակա-
ռակը խորին վիշտ մը մեր վարջութեան դէմ, որ սը-
նոտի լուրերով կը հեգնէր մեր դառն ճակատագիրը:
Բարենորոգում ըսելով ի՞նչ կը հասկնայ արդեօք մեր
կառավարութիւնը, յափշտակութիւն, սպանութիւն, բըռ-
նաբարութիւն: Եթէ ադոնք են, մենք գոհ ենք մեր պաշ-
տելի սուլթանէն, որ այնքան հիանալի կերպով գիտէ
հրէշային դերեր կատարել:

Տիվրիկի և իր շրջակայ 10 հայ գիւղերուն վիճակը
նկարագրելու համար սիրտ պէտք է, ուստի կը բաւակա-
նանանք երկու խօսքով: — Քրդերը առաջին յարձա-
կումով վերցուցին այդ գիւղերէն 4500 ոչխար, 200
ջորի, 500 էջ և կով: Երկրորդ յարձակումով սպանե-
ցին 20 կտրիճ երիտասարդներ և 100-էն աւելի ալ
վիրաւորեցին. իսկ գիւղերը ամբողջ պաշարւած են: Զի-
մառայ պատուական գիւղը, Բինկեայ, Ասմայ, որոնք քիչ
շատ պատառ մը հաց ունենին, այսօր ամենաչնչին առար-
կային դէմ կը դողան, ջուրի գաւաթ մը անգամ չու-
նին. հաց և զգեստ կաղաղակեն, զի ցուրտը և անօ-
թութիւնը սկսած են արդէն իրենց նախնիները գոր-
ծել: Եկեղեցիները սրբապօծւած և ոտնակոխ եղած է
ամեն բան: Ի զօր կուսակալին թախանձանքներ, բո-
ղոքներ կը տեղանք, նա չուզեր լսել մեր ձայնին. մի-
այն ձևակերպութեան համար 50 զինուոր ուղարկեց, ա-
նոնք ալ տեղափոխման համար մեծամեծ դժուարու-
թեանց կը հանդիպին: Հեռագրեցինք նաև Պոլիս: Աու-
սակալը նեղացած մեր այս ձեռնարկութեան վրայ և
աւելի ծանր պատասխանատուութեան տակ չի յնալու
համար իմացուց մեր կողմի թուրք երեւելիներուն, որ-
պէս զի ապահովութեան հոգ տանին ասոնք ալ 40
քաղաքապահ զինուոր հանեցին, որոնք արշաւանքները
կասեցնելու յաւակնութիւնը ունին...

Աուսակալը և տեղական կառավարութիւնը կուզեն
հաւատացնել թէ ներկայ խռովութեանց պատճառը
հայերն են, և կը համարձակին իսկ ըսել թէ ասպա-
տակները քրդու զգեստով հայեր են: Մեր առաջնոր-
դը բացարձակապէս հերքեց այդ զրպարտութիւնը և
մի առ մի հաստատեց թէ աւազակները քրդեր են,
որոնցմէ շատերը ծանօթ են արդէն և որոնք կը յայ-
տարարեն թէ կառավարութիւնը իրենց լիապէս հրա-
ման տւած է ուզածնին գործելու և եթէ երբէք հա-
յոց կողմէ ո և է պզտիկ ընդգիծութիւն ըլլայ, արտօ-
նեալ են մինչև իսկ բնաջինջ ընել գանոնք:

Որո՞ւ դիմէնք, որո՞ւ աղաչենք. մեր վարջութեան, ա-
ռաջնորդին բոլոր դիմումները ու աղերսները անզօր կը
մնան: Այժմ Տիվրիկի 500 տուն հայ բնակիչներս ա-

մեն բանէ ձեռնթափ՝ քաշւած ու պաշտպանողական
դիրք մը բռնած ենք՝ սարսափով սպասելով այն օր-
հասական ահաւոր վայրկեանին, ուր մեր անբախտ կեան-
քի դոյութիւնը պիտի վճոււի:

Բ Ա Չ Ա Ր

Բազար գիւղը շատ նեղ վիճակի մէջ կը գտնուի.
Վերջէ գիւղէն 20 հայ բնատարկած են և 30-ն ալ
կը փնտոււին. այն կողմերը զօրք ղըրկւած է հոսկէ և գիւ-
ղերը պաշարւած են. զէնք փնտուելու պատրուակով կի-
ններուն սնդուկները կը բանան և ինչ որ կայ մէջը կառ-
նեն. ամեն կողմ սարսափ: Հոս տեղի բէտիֆները զէն-
քի կոչեցան. գիւղերէն եկող չկայ. չենք գիտեր ինչեր
կը պատահին. Բազար գիւղէն մարդ չեն ձգեր, որ Պո-
լիս երթայ: Մուրատ-Չայ ևս սարսափի մէջ է. հայերը
զինւած գիշեր ցորեկ կը հսկեն ու չեն թողուր, որ թուրք
մտնէ գիւղը: Հոս Նուսուհ փաշայի բաղնիքին թուրք
թէլաքները կաշիատին եղեր հայ թելաք մը բաղնի-
քին հնոցը նետել բայց հայուն աղաղակները թիւրք
մը լսելով կը հասնի ու կազատէ խեղճը:

Շ Ա Պ Ի Ն - Գ Ա Ր Ա Հ Ի Ս Ս Ր

I

Շապին-Գարահիսարի կառավարիչ Մուստաֆա պէյի
գործած խժգժութեանց մանրամասնութիւնքը թւել ան-
կարելի է. ինչ որ գործւած է քաղաքին կամ գիւղո-
րէից մէջ՝ ամենքը նորա գազանական հրամանաւ է:
Մասնաւոր գաղափար մը կազմելու համար այս տեղաց
վիճակին վրայ բաւական է նկատողութեան առնուլ
սա ճշմարիտ եղելութիւնը: Շապին-Գարահիսարի հա-
րուստներէն Պարոն Աարդեան Յովհաննէս՝ գիւղացիներու
հետ առևտրական հաշի մը համար հակառակե-
լով, այս վերջիններէն մասնւած է իբր յեղափոխա-
կան և բնատարկւած: Պ. Աարդեանի փեսան Տեռագիր
մը պատրաստած է պատրիարքարանին ուղղեալ. Տեռա-
գրապետը հակառակ իւր պարտականութեան, միւթէ-
սարիֆին հրամանաւ ինչպէս ամեն ժամանակ, նոյնպէս
և այս անգամ, Տեռագրին բնագիրը Մուստաֆա պե-
յին կուտայ. սա կոչելով ստորագրութեան տէրը՝ կը
հարցնէ անոր Տեռագրին առ ուր ուղղեալ ըլլալը: Նա
կը պատասխանէ թէ ի պատրիարքարան: Մուստաֆա
պէյ բարկացած կը պատասխանէ. «Փաթրիք հա՛նկը ի՞նչ
օրաճագ քի պէնիմ իշիմէ գարըշա պիլիսին» (պատրի-
արքը որ շունը պիտի ըլլայ, որ իմ գործիս խառնելու
կարող ըլլայ) և թուղթը պատուելով, մարդն ալ կը
վաճակէ, ըսելով՝ «Սօն նէֆէսիմէ գալտար չալըշաճաղըմ՝
միլէթինիդի մահֆ իթմէկէ» (մինչև վերջին շունչս պի-
տի աշխատիմ՝ ազգերնիդ ոչնչացնելու):

Մուստաֆա պէյ երբ գլուխը կը տաքցունէ տեղոյն բարկ օղիով՝ ալ ինչ չարութիւն ըսես չի խորհիր խեղճ հայոց գլխուն: Անգամ մըն գինով վիճակի մէջ տւած հրամանաւ՝ վեց հատ կտրիճ հայ բանտարկելոց չարաչար սպանած են. սոյնանման դէպքեր միշտ անպակաս են և այս գազան դեռ անպատիժ մնացած է: Կը յուսանք, թէ օր մը առ ալ կիցնայ...

Մուստաֆա պէյ, որ առաջ Մարաշի կառավարիչն էր, իւր հայատեցութեան վրայ աւելցուցած է կրկին մաս մը ալ՝ մարաշցի հայոց իւր մօրուքին... քսած ըլլալնուն համար: Անտի Գարահիսար գալով, կաշխատի գիշեր ցերեկ իւր միակ իղձովն եղող՝ հարստահարութիւնք, տանջանք, բանա և սյնն ի դործ դնել, միայն և միայն խեղճ, անզէն հայոց վրայ: Գիշերները արբեցած կառավարութեան պաշտօնատունը կիջնէ, միայնակ նստած սենեկին մէջ՝ խեղճ հայ բանտարկեալ մը կը կանչէ վեր, ու՝ իկաններու կը հրամայէ. բոլոր ուժովն հարւածել խեղճ՝ որտեղաց որ հանդիպի, ինքն ալ երբեմն կատղած վեր կը ցատկէ տեղէն՝ սուկալի հայհոյանօք լեցւած բերանը և կը յարձակի անոնց վրայ: Բանտարկեալներու միայն ակնաները կը կոտորին՝ գաւազանի հարւածներու տակ, միոյն բեխի կէսը կը կորստի երկաթահիւս խարազանի հարւածով: Մուստաֆա պէյ բացարձակապէս ըսած է՝ թէ յանունըս մարդկութեան տուարէն թող ջնջի, եթէ այս քաղաքին մէջ կոտորած մի չի տւած՝ մեկնիմ աստի: Ե

II

Շապին-Գարահիսարի շրջակայ գիւղերը բոլորովին թշուառութեանց և կոտորածի դաշտ են դարձած: Արօրակայ դաշտին վրայ գտնուող շատ մը գիւղեր, մանաւանդ Աղբախ, Ապանա, Ղարի և Վերի Աճպտերներ, Ալամնիկ և Սէվինտիկ գիւղերը՝ յարձակումներ կրելով՝ Վէրձանիսի և զխաւորաբար Ալըշան պէկի (քիւրդ) հրամանատարութեան տակ գտնուող վայրերի քիւրդ աւազակներէ, գրեթէ բոլորովին աւերակ դարձած են: Տանց կահ կարասիք, նոր հունձքէ գոյացած ցորեն, գարի և այլն, անոնց հատ մը իսկ թողուլ՝ հետերնին տարած են, յափշտակած են. նաև ամեն կարգի անասուններ անխտիր: Կոյս աղբիկներու և կանանց պատուոյ բռնաբարութիւններ հաշիւ չունեն: Մարդկանց կորուստ առ այժմ չկայ այդ գիւղերը, բայց քաղաքը ամենաթշուառ վիճակ ունի: Թուրք մոլեռանդ գազաններու յարձակումէն ազատելու համար, ժողովուրդեան մի մասը կը յաջողի երկու եկեղեցիներ և երկու քար ու կիր պանդոկները ապաստանիլ, իսկ անոնք, որ դուրսը մնացած են, ամբողջովին ջարդուած են: Քաղաքին մօտ գտնուող Չրտըխի, Անեղըին և Պուսէյիտ գիւղերը մեծ կոտորածներ կան, իսկ թշուառ Թամզարան բոլորովին ջարդուած է:

Ա Կ Ն

Մեր միւլթեզիմ ծանօթ ապուշը իւր հերոսական ընթացքը ի գործ դնել փորձեց նաև մեր գիւղի վրայ,

սակայն չի կրցաւ յաջողիլ միայն ժողովուրդեան յուզումն շատացաւ, եկեղեցին ալ փակեցին:

Տուրքերու դանձման մասին շատ ստիպումներ եղան. սպոր դէմ մեր ըսածներն առանց մտիկ ընելու, իբրև ըմբոստ, կը ձանձնան: Ասոնք բաւական չէին, Տէրսիմի քիւրդերուն հո՞՞՞ բազմութեամբ մեր շրջականերն աւերին էլ վրայ եկան: Քէմախի գիւղերէն սկսեալ մինչև Հանովայ, Արմտանները և Լիճքը հասած և ամբողջ տաւար ու արջառներն տարած են. այժմ կը սպառնան մեր գիւղին ալ: Ծողովուրդը ահ ու սարսափի մէջ գիշեր ցերեկ կը հսկէ գիւղին շրջականերն:

Ծողովուրդը անզէն, կարօտ է ամէն կերպ աջակցութեան. վիճակնիս անստոյգ է:

Բ Ի Ն Կ Ե Ա Ն

Մեր գեղը հոկտեմբերի 8-ին յարձակում մը կրեց Մէրհալէ կոչուած կամաւորներու և դրացի թիւրք գիւղերու ժողովուրդեան կողմէ: Յարձակողներու թիւը կը հասնէր երեք հարիւրի, որոնց մէկ մասը ջօարբիները եղած հոտերը քշեցին տարին, իսկ միւս մասը գիւղին դիմացի քարերը բռնած՝ Ծ ժամ շարունակ գնդակ տեղաց գիւղին վրայ: Գիւղս գտնուած խարաչորցի գործաւորներէն մին մեռաւ և քանի մը հոգիներ ալ վիրաւորուեցան թշնամիին գնդակներէն:

Այս յարձակման մէջ հոտերնիս տուժելէն զատ, հիւսայ կսպասներ աւելի մեծ յարձակման մը: Այլ ևս մեզի համար հանգիստ և անդորրութիւն չկայ: Սերաստիա կուսակալին դիմացինք, տեղեկագրեցինք Անայ վարչութեան ալ:


Եթէ անմիջական օգնութիւն չի լինի, քանի մը օրէն պիտի հատնին մեր ունեցած գոյքն վառօղն ու քանի մը գնդակները և թշնամին ներս մտնելով, պիտի աւերէ նաև Բինկեանը, ինչպէս աւերեց քանի մը օրւան մէջ Կասմա, Չղմարա, Լիճք, Հասանօվա և Արմտան գիւղերը: Բինկեանէն առաջ մեր գիւղը արդէն աւերեցին: Ես Ղարվատէն ժողովուրդեան մէկ մասի հետ այժմ Բինկեա ապաստանած լինելով, կը փութամ գրել սոյն համառօտ տեղեկութիւնը:

Վ Ա Ն Ի Ց

Կուլից յետոյ Աշարէ և Բօղազ-քեասանը աւերած են, իսկ գիւղացիները մի շէյխից քշելով՝ Աղթամարի վանքն են լցւած: Կաթողիկոսը քաղաքումն է: Ալճալի և Արձէշի բնակիչները Ղանի նաւահասանգիստ՝ Աւանց գիւղն են լցւած, Իմին փաշայ Համիդիէ քիւրդ բեկից վախենալով: Գաւառի վանեցի բոլոր խանութպանները իրանց խանութները թողել փախել են: Օր չի լինում, որ սպանութեան և կողոպուտի լուր չը լսուի: Մօտիկ մի ջարդի մեծ երկիւղը կայ: Մէկ հրացանը 10 լիրա կը ծախուի:

Մ Ո Կ Ս Ի Յ

Այսօր, ուրբաթ, Հոկտեմբերի 5-ին, առաւօտ ժամը 3-ին, տեղւոյս գայմագամի մարդիք, ոստիկաններով և Գասապայի քրդերով միաբանեցան և յարձակեցան հայոց վրայ: Պատրաստ եղող հայեր քարով փայտով յետ մընցին թշնամիներին: Պիտայաթի անդամ Յօսիկէ Յարութիւնեան գլխուն վրայ այնպիսի ծանր վէրքեր ստացաւ, որ մօտ է մեռնելու: Շատ չանցած 500-է աւելի քիւրդեր հաւաքեցան և ուզեցին Սատուն գարձնել Մոկս: Հայեր փախան տուներ և դռներ գոցեցին: Ասորածի ընդհանուր սարսափ կը տիրէ: Կանայք, մանկունք դռները գոցած, կը ողբան աղիողորմ: Այս դրութեան մէջ մինչև երբ պիտի մնանք: Եթէ դուրսէն օգնութեան չը հասնեն, ամենս պիտի ջարդուինք:



Ն Ա Մ Ա Կ Պ Ո Լ Ս Ի Յ

Եւրոպական թերթերը մեծ աղմուկով և ոլսանաններով հռչակեցին՝ թէ սուլթանը վերջապէս ընդունեցաւ Հայաստանի Բարենորոգմանց ծրագիրը: Պետութիւնները կարծեցին, թէ անով ամեն ինչ կարգադրեցաւ... սակայն չարաչար խաբւեցան, զի թուրք կառավարութիւնը պարզապէս անոնց քթին խնդաց... և ինքը, անոնց ձեռք այդ խաղաղքը տալով, ժամանակ շահեցաւ ջարդելու հայ ժողովուրդը, բոլորովին բնաջինջ ընելու համար հայ տարրը իւր պետութեան հողերէն: Պէտք է խոստովանել, թէ կամ Եւրոպական պետութիւնները իրենց բարձր դիւանագիտութեամբ խաբւեցան աղէս թուրք կառավարութեանէն, որ իրենց տկար ըլլալը կը յայտնէ, և կամ թէ դիտնալով՝ մեղանչեցին և աչք գոցեցին, որ թուրքը ազատ համարձակ իւր վայրագութիւնները կատարէ: Ասով Եւրոպական այդ քաղաքակիրթ, քրիստոնէից պաշտպան, մարդասէր և այլն տիտղոսներով ինքզինքնին դրւատող պետութիւնները, աւելի վայրագ, աւելի ոճրագործ և աւելի դազան գրտնւած են, քան թէ թուրք բարբարոս կառավարութիւնը:

Մեր այս ըսածը ապացուցանելու պէտք չկայ. լեւրինք և քարինք աղաղակեցին: Այսօր ամբողջ Հայաստան արեան մէջ կաղաղակի ի շնորհս Եւրոպական բարեգութ կառավարութեանց... ամեն կողմ աւարառութիւն, աւերում, բռնաբարում, բանտարկութիւն և ջարդայն, ջարդ և սոսկալի ջարդ, ոչ թէ վեհանախութեամբ, այլ վատութեամբ յանկարծակի յարձակելով անգէն հայ ժողովուրդեան վրայ կամ առաջուց խելով ունեցած գէնքերը: Ամեն օր մի նոր քաղաքի կոտորածի լուրը կը հասնի մեզ. — ահա՛ ծրագիրը և անոր գործադրութիւնը...

Պատրիարք սրբազանը իւր այնքան արիութեամբ հան-

դերձ, շարած կը մնայ գլխիկոր գաւառներէ տեղացած հատորաւոր նամակաց կոյտերուն մէջ, որոնք ուրախառիթ որ և է լուր չեն պարունակեր, այլ թափւած արիւններու հաշիւն և օրհասականներու վերջին ծիչերը: Ծրագրի ստորագրելէն ետք առաջին անգամ պաշտօնական ջարդը սկսաւ Տրապիզոնէն, յետոյ Աքսար, Բաղէշ, Մուշ, Պայպուլթ, Կարին, Աան, Տիվրիկ և այլն: Երբ միայն այս այս քաղաքաց անունները կը յիշեմք, պէտք է գիտնալ, որ ամենքն ալ իրենց շրջակայ հայաբնակ դիւղերով միատեղ կողոպտուած, այրւած, քանդուած, բնակիչները սրէ անցւած և շատերն ալ բնաջինջ եղած են. ասոնց մանրամասնութիւնները հետզհետէ պիտի ստանանք անշուշտ: Դեռ երեկ լուր ստացանք՝ թէ Տիգրանակերտի հայ ժողովուրդը հրոյ և սրոյ ճարակ եղեր է. իսկ Մարաշէ և Ջէյթունէ հասած այլ ընդ այլոց լուրերը չեն կրնար գուշակել տալ մեզ դէպքերու իրական ճշտութիւնը. ամեն պարագայի մէջ սա ճիշտ է՝ թէ պաշտօնական հրաման գացած է՝ թնդանօթով բնաջինջ ընել բոլոր այն կողմի հայերը: Գաւառներէն լուր ստանալ անկարելի դարձած է, հեռագրներու պատասխան չկայ, մինչև անգամ Ամերիկայի դեսպանատան Բաղէշի միսիօններու տւած հեռագիրը մէկ շաբաթ անպատասխանի մնացած է:

Այս պահու Տիվրիկէ կստանանք հետեւեալ տեղեկութիւնները. —

Հոկտեմբեր 20-ին (ն. տ.), կիւրակի օր 400 հոգիէ բաղկացեալ քրդաց հրոսակախումբ մը, իրենց պետ ունենալով Միհր-Ալի հռչակաւոր աւազակապեան, որ իւր քաղաքործութեանց համար Համիդիէ անիծեալ հեծելազնդին մէջ ընդունւած է, երկու մասի բաժնուած կը յարձակի մին Եփրատի ափունքը գտնւած Բինկեայ գիւղին և միւսը անկէ մէկ ու կէս ժամ հեռու Ջիմարայ գիւղին վրայ: Բինկացիք իրենց գիւղին բնական դիրքի շնորհիւ կրցան դիմադրել մէկ քանի վիրաւոր և մէկ զոհ տալով: Իսկ Ջիմարայ գիւղը ամբողջապէս աւարատութեան կը մասնւի, դւարները և արջառները կը տանին. յիսունի չափ մեռեալ և բազում վիրաւորեալներ: Նոյն հրոսակախումբը կսպառնայ այս անգամ 800 հոգւով յարձակիլ Բինկեայի վրայ՝ իւր պարտութեան վրէժը լուծելու: Այս այն խուճըն է, որ 1-2 շաբաթ առաջ Հասան-Օվայի և Արմտանի գիւղերուն վրայ յարձակած ու կողոպտած է ամեն բան: Բինկացիք դիմում ըրած են Տիվրիկի պաշտօնութեան, բայց՝ անօգուտ. պաշտօնութիւնը մէկ պարտականութիւն ունի, այն է դէպքերը պատահելէն վերջը հոն մէկ քանի զօրք ղդիել հասկանալու համար՝ թէ իւր տւած հրահանգները անթերի գործադրւած են: Նոյն հրոսակախումբն ուրիշ ղոկատներ Տիվրիկի արևմտեան կողմը գիւղերու շուրջը կը պտտին. յաջողած են Ակնայ երևելիներէն Գասապեան Աղբքսանդրի երկու որդիքն և իրենց քեռայրը քաղաքէն յափշտակելով՝ լեռը տանել կառավարութեան ներկայութեանը: Առևանգեալ երեք անձերու համար 300 ոսկի փրկանք կը պահանջեն, զոր յետոյ պիտի բաժնին կառավարութեան պաշտօնէից հետ: 2ենք դիտեր՝ թէ ազատած են, թէ ոչ:

Յարձակող քիւրդերը մեծ մասամբ կը կրէին Մարթինի հրացաններ կառավարութեան կողմանէ բաշխուած: Հայը ոչ զարնելէ կը վախնայ, ոչ զարնուելէ, գիտեն ինքզինքը պաշտպանելու եղանակը, սակայն ի՞նչ ընէ, երբ զէնք չունի և ունեցածն ալ առաջուց ձեռքէն առնուած է: Պոլսոյ զէնք ծախող վաճառատանց առջև ոստիկաններ կսպասեն արգելելու համար հայերուն, որ գէնք չը գնեն, իսկ մահապահանները ազատ են: Ծրագրի ընդունելութեան առթիւ դեռ նոր Պոլսոյ լրագրաց մէջ պաշտօնապէս հրատարակեցաւ թէ քիւրդ հեծեւազորաց զէնքերը պիտի առնուին և միւս քիւրդերն ալ չպիտի կրնան զէնք կրել, սակայն մայրաքաղաքիս մէջ լրագիրը կարգացած միջոցնիս իսկ կը տեսնենք եղբերունն գացող քիւրդեր, որք մէկ մէկ շէշխանէ ուսերնին զարկած՝ շուկայի մէջ ազատ յամարձակ կը պտտին, մինչդեռ հայը մեծ զմելի մը անգամ գործածելու ազատութիւն չունի:

Ալ բոլորովն հաստատուած է, որ կառավարութիւնը ինքը կազմակերպած է պատահած և պատահելիք արիւնահեղութիւնները: Ամեն քաղաքաց մէջ տաճիկ ժողովուրդը կառավարութեան գրգամները զէնքի դիմած է հայերուն դէմ: Յաւելին այն է, որ կոտորածէն վերջը ողջ մնացող հայերը կը բանտարկէ. այս ալ նպատակաւոր է, առաջին՝ իր վայրագութիւնը կատարեալ ընելու և կոտորածէն ազատողներն ալ բանտերու մէջ տանջելու համար. երկրորդ՝ Եւրոպային հասկցնելու համար, որ ինչպէս իր թուրք գետնանները հրատարակեցին անամօթաբար Եւրոպայի թերթերուն մէջ, թէ տեղի ունեցած դէպքերուն բուն պատճառը հայերն եղած են, բնականաբար ողջ մնացող հայերը տանջանաց վախէն չպիտի կրնան ճշմարտութիւնը խոստովանել՝ թէ իրենք անմեղ են և նախայարձակը թուրքերը եղած են և այլն:

Գաւառներու մէջ հոսած այս անմեղ արիւններու հանդէպ յիշատակական բարեխնամ՝ կոչուած կառավարութիւնը ամեն օր բունի Պոլսոյ թերթերուն մէջ հրատարակել կուտայ խայտառակ ստախօսութեամբ՝ թէ Անատոլի նահանգաց մէջ, շնորհիւ վեհափառ կայսեր, անդորրութիւն և ապահովութիւն կը տիրէ, և չամբռնար իսկ արեան հեղեղներու մէջ ծփացող վիխայէթներու աննունները մի առ մի թուել տալու: Թուրք կառավարութեան այս ամեն մեքենայութիւնները յաջողութեամբ կը պսակեն և դեռ պիտի յաջողեն այնքան ատեն, որ մեծ պետութիւնները խուլ և անզգայ գտնուին, և կամ թէ մինչև որ հայերը կորսնցնելով ամեն յոյսեր, դիմեն իրենց վերջին և միակ միջոցին, այն է ընդհանուր յեղափոխութեան: Այլ ևս սակէ ուրիշ միջոց չէ մնացած հայուն համար:

Այս պահուս համառօտ նամակ մի ստացայ Մուշէն, որ կը տեղեկացնէ հետևեալն.—
 Կառավարութիւնը յայտ յանդիման քրիստոնէից զէնք բաշխած է տեղւոյն տաճիկներուն, որպէս զի կազմ և պատրաստ գտնուին յարձակման հրամանին: Նաև Իւ-


լճմա Հաճի-Թայիպը զոկուած է Մշոյ դաշտը և Սասունի լեռները, հոն գտնուող քիւրդերուն զէնք բաժնուլ և գրգռելու համար զանոնք, որ անխնայ ջարդեն հայերը, մեծ և փոքր անխտիր, երբ բարձրագոյն հրամանը գայ: Այս բանը իմանալով Սասունի սովեայններուն ուստես բաշխող միսիօնարները տեղական կառավարութենէն զօրք պահանջած են, որ իրենց ընկերանան պաշտպանելու համար կատարած քրդերուն դէմ, զի այս վերջինները շատ գէշ աչքով կը նային ամերիկացի միսիօնարաց վրայ, և միայն ակուանին կրճտելով կը բաւականանան, որովհետև խստիւ հրաման եղած է, որ չըլլայ թէ անոնց մէկուն վնաս մը հասցնեն, գիտեն թէ հետևութիւնը շատ ծանր կըլլայ: Փորձով տեսնեցաւ, որ անցեալ տարի Բանկալթի սխալմամբ մեռուած ամերիկացի մը, որ թիւնէլի տնօրէն էր, 50,000 ոսկի արժեց կառավարութեան. մինչդեռ 50,000 հայերու կորուստը մէկ դանկ չարժէր՝ ոչ տաճիկն, ոչ ալ յ հաւասարութիւն և արդարութիւն՝ քարոզող եւրոպացւոյն:

ՆԻՒՐԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՅՈՒՑԱԿԸ

Արամից 200 բուբ., Մի խումբ Թ. ք. ի կանանց ձեռքով հաւաքած 530 բ., Երեսից բւ. Ա. ից 118 բ., Կալխիդայից 85 բ., Կալխիդայից 105 բ., Ն. Կ. ից 25 բ.:
 Նիզակ քաղաքի Կեդր. սնտուկի մէջ ստացուեցան.
 Զ. Գ 5 օսմ. ոսկի, Զեփիւռ 10 օսմ. ոսկի, Գղ. 5 ոսկի:
 Արշակաւան քաղաքի Կեդր. սնդ. մէջ ստացուած են.
 Նապալապ 35 օսմ. ոսկի, 5 ոսկի Թղթադ., Յովհաննէսեան խմբ. 80 դհ., Կարոյեան խմբ. 60 դհ., Կային և Նիզակ 80 դհ., Կայծակ խմբ. 120 դհ., Մամիկոնեան Բ. 30 դհ., Լախա 45 դհ., Զեփիւռ 12,5 դհ., Տալուրիկ խմբ. 20 դհ., Ռաֆֆի խմբ. 60 դհ., Անգլ խմբ. 60 դհ., Ծմակ խմբ. 90 դհ.,
 Սարմաստից.—Ս. Շ. 100 զուան, Ուղտապան Նիկ. 50 զուան, Ոմն 150 զուան, Վ. Ավ 50 զու., Մահաւտի 0. Մ. Գ. 40 զու., Գ. Մ. Գ. 10 զու., Տիկ. Սուլթան 50 զու., Տիկ. Խանոււմ 40 զու., Տիկ. Ս. Շ. 50 զու., Մահա. Մ. Գ. 20 զու., Ռ. Մ. Ա. 10 զու., Գ. Բ. 15 զու., Ս. 2. 10 զու., Վ. Լ. 30 զու., Անյայտ 6 զու., Գ. Ի. 2 զու., Գ. Մ. 4 զու.:
 Ամերիկայի Լովրէնց-Մէսս քաղաքից՝ Ար. Թոր. 2 դոլար:
 Շ. Թ. ք. Ա. 10. Ֆր.:

Դաշնակցութեան անձամօթնորից խնդրում է թղթակցութեան և ներատուութեան համար դիմել.
 Armène-Gaspar, poste restante; Carouge (Suisse).
 L. Boole, 45, Augustus Rd. Hammersmith, W. London.
 Վիլննա, Դաշնակցութեան ազատ տպարան:

ԴՐՈՇՆԿ



„ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ“ ՕՐԳԱՆ

Զ Ե Յ Թ Ո Ւ Ն Ն

Զէյթունը ումախոճուում է:

Երբ մենք այս սողերը գրում ենք, Զէյթունը ծածկած է հրացանների ու թնդանօթների մսով, լեռների ու ձորերը դղողում, որոտում են թնդանօթների պայթուցից և հրացանների տրաքոցից:

Զէյթունը ումախոճուում է:

Հրաման է արձակած, պիտի պատժի ապստամբը, պիտի կոտորել և, ով գիտե, թե որքան արիւն է հոսում, քանի՜ քանի վիրաւորեալներ են սնքում, տանջուում, քանին՞րը արդէն վաշտ են իրենց վերջին շունջը ազատութեան համար՝ թշնամուն թողնելով իրենց սառը դիակը...

Այո, հրաման է արձակած՝ կոտորել ազատութեան համար կուռղիներին, աւերակ դարձնել այն երկիրը, որ գլուխ չէ խոնարհեցնում բռնակալութեանը, որ կոտորած անելով Մեծ ու Փոքր Հայաստանում, այժմ էլ ումախոճում է Զէյթունը, հայ ժողովուրդի պարծանքներից մեկը, աւերակ դարձրած Սասունի քրոջը:

Սասուն և Զէյթուն, ահա այն երկու հսկաները, որոնք երբէք վիզ չեն ձկել անարգ ստրկական շղթայի տակ, որոնք ազատութիւնը գերադասել են կեանքից, իսկ մահը՝ ստրկութիւնից, և դարերով պահել են իրենց անկախութիւնը հակառակ ուժեղ թշնամու ջանքերին, նրա գործ դրած անաղիւ ու տարդի միջոցներին:

Աւերակ դարձաւ Սասունը, ցիրուցան եղան նրա որդիները, այսօր էլ ումախոճուում է Զէյթունը նոյն վիճակին ենթարկելու համար. թշնամին յոյս ունի, որ դրանով կը քանդէ այն բունը, որտեղ յեղափոխական ոգին արմատ է բունում և ճիւղեր արձակում շուրջը: Անսովոր թշնամին յոյս ունի այդ բարբարոս միջոցով

մեռցնել, արմատախիլ անել այն շարժումը, որ բունել է այսօր ամբողջ Տաճկահայաստանը:

Արմատախիլ անել յեղափոխական ոգին, մեռցնել յեղափոխական շարժումը, որքան միամտութիւն:

Եթէ թշնամին յոյս ունի մեռցնել հայ ժողովուրդը, թող յուսայ, որ կարող կը լինի և մեռցնել, արմատախիլ անել յեղափոխական ոգին, շարժումը: Այժմ այս երկու հասկացողութիւնները անբաժանելի են— հայ ժողովուրդը և յեղափոխութիւնը այնպէս են միացած, որ ոչ մի ոյժ նրանց չէ կարող բաժանել:

Ճիշտ է, թշնամին կարող է աւերակ դարձնել Սասունը, սրի անցկացնել հայ ժողովուրդը, ումախոճել Զէյթունը, բայց մեռցնել ժողովուրդը, այն ժողովուրդը, որ իւր կեանքում տեսել է աւելի մեծ արհաւիրքներ, որի հայրենիքը բազմիցս աւերուել է և զաւակները սրի անցկացուել, այդ ժողովուրդը, 19-րդ դարու վերջում չի՛ մեռնիլ, չի կորչիլ. նրա բարոյական ոյժի առջև խոնարհուել են շատ շատ բռնակալներ ու աշխարհակալներ, նրա բարոյական ոյժի առջև կը խոնարհուի և Սուլթան Համիդը, այդ մեծ ոճրագործը, որքան էլ եւրոպական դիպլոմատիան անտարբեր գտնուի, որքան էլ նա մատնուի անգործունէութեան, մոռացութեան տայ 80-100 հազար զոհերը. ու առակների պէս հոսող մարդկային արիւնը:

Մենք կրկնում ենք,—հայ ժողովուրդը չի՛ մեռնիլ, նրա բարոյական ոյժը մեծ է և նրա առջև կը խոնարհուին շատերը:—Մինչդեռ սուլթանը ազատ ու համարձակ դիպլոմատիայի գիտակցութեամբ և ուռու կառավարութեան աջակցութեամբ կոտորածներ է անում, մինչդեռ նա երկիրը աւերակ է դարձնում, այդ դիակների միջեց, աւերակների տակից ծնւում, դուրս են գալիս, բարձրանում են հայդուկները ու ահաբեկիչները և կուում թշնամու դէմ, վիրաւորում, վիրաւորում են:

Տմարդ թշնամին ուժեղ է, դրանք էլ կընկնեն, բայց կուիւր չի դադարիլ. դրանց դիակի մօտ կը կանգնի նրա եղբայրը, քոյրը—նոյն զէնքով, նոյն հրացանով: Եւ այս կուիւր կը շարունակուի անընդհատ, մինչև որ

Թշնամին գլուխ կը խոնարհեցնի...

Հայ ժողովուրդը չէ դաւաճանել իւր հազարաւոր նահատակների յիշատակին, իւր ճակատին չէ կրել իւր եղբոր արեան բիծը, գլուխ չի խոնարհեցնիլ, նա կը կռւի, նա վրէժխնդիր կը լինի, թէև այսօր մենակ է և ամեն կողմից շրջապատւած թշնամիներով: Ընդհանուր սարսափի ու աղէտի ժամանակ ժողովուրդը չը վհատեց, չյուսահատեց և ոչնչով չխրախուսեց թշնամուն, նա չնահանջեց. թշնամին կոտորել է, բայց չէ ընկձել: Հայ ժողովուրդը նոյն դժգոհն է, նոյն ապստամբը, նոյն յեղափոխականը: Եւ այս ոյժի առջև ո՞վ չի խոնարհուիլ...



Զ Է Յ Թ Ո Ւ Ն Ի Ա Պ Ս Տ Ա Մ Բ Ո Ւ Թ Ի Ի Ն Ը

ԵՆՐՈՊԱԿԱՆ ԹԵՐԹԵՐԻՑ

(ՀԵՌԱԳԻՐՆԵՐ Կ. ՊՈԼՍԻՅ)

17-ին Դեկտ. Դեսպաններին կառավարութեան ներկայացրած տեղեկագրերից հաստատուում է, որ Զէյթունի ապստամբները սպանել են 266 մուսուլման, վիրաւորել են մօտ 100 հոգի և այրել 500 տուն:

19-ին Դեկտ. Վայսերական զօրքը շրջապատել և բոլորովին ջարդել է Զէյթունի ապստամբներին:

20-ին Դեկտ. Հակառակ պաշտօնական լուրերի, լուր է պատում, որ Զէյթունի ապստամբները դերի են վերցրել Բահրի փաշային:

21-ին Դեկտ. Զէյթունի ապստամբները գիշեր ժամանակ յարձակել են Արբէնգի գիւղի վրայ, քըշել-տարել են կենդանիները, կրակ են ձգել 5 տուն և վիրաւորել մի մարդ: Հետևեալ օրը յարձակել են Վերտէլի վրայ:

21-ին Փրանկֆորտ.—Վ. Պոլսից մի հեռագիր «Փրանկֆորտ Գազէտին» հաղորդում է, որ 400 թուրք զինուորներ և 500 բնակիչ տղամարդ, կին և երեխայ, որոնց պաշարել են Զէյթունում 12 հազար ապստամբներ, սրի են անցկացրել վերջիններս: Հեռագիրը աւելացնում է, որ երեկ կառավարութիւնը յայ-

տնել է դեսպաններին՝ որ Մուստաֆա փաշային հրամայած է Զէյթունի վրայ յարձակել 10,000 զինուորով, երկու թնդանօթաձիգ զօրավարով և ումբակոծել:

**

21-ին Դեկտ. Զէյթունի ապստամբների դէմ պատաստութիւնները սկսել են: Զէյթունի դրաման մասին պատող լուրերը պաշտօնապէս չեն հաստատուում:

Դ Ա Շ Ն Ա Կ Յ Ո Ւ Թ Ե Ա Ն

Հ Ա Յ Դ Ո Ւ Կ Ա Յ Ի Ն Խ Մ Բ Ի Կ Ո Ւ Ի Ը

Վ Ա Ս Պ Ո Ւ Ի Ր Ա Կ Ա Ն Ո Ւ Մ

Ն Ա Մ Ա Կ Ն Ե Ր Պ Ա Ր Ս Կ Ա - Տ Ա Ճ Կ Ա Կ Ա Ն Ս Ս Հ Մ Ա Ն Ա Գ Լ Խ Ի Յ

I

ԶԵՕԼ-ՉԻՄԱՆԻ ԵՒ ՄՍՄԱԴԱԼԱՆԱՅ ԿՈՒԻԸ, ՑԵՂԱՊԵՏՆԵՐԻ ԶՍՐԴԸ, ԹԱԼԱՆ ԵՒ ԽԺԴԺՈՒԹԻԻՆՆԵՐ ՍՍՀ ՄԱՆԱԿԻՑ ԳԱՒԱՌՆԵՐՈՒՄ. ՄԱՐՇԻՄՕՆ

Դեռ ևս աշնան սկզբում, երբ քրդերը իջան եայլաղներից և այսպիսով դատարկւեցան Պարսկա-Տաճկական սահմանակից լեռները, տաճիկ կառավարութիւնը հրահանգներ ուղարկեց քուրդ ցեղապետներին խստութեամբ հսկել սահմանները: Նա վախենում էր հայ հրոսակախմբերից, որոնք ի բըր հարիւրներով և հազարներով պիտի անցնէին սահմանը: Ու երբ տեղի ունեցան վերջին յայտնի կոտորածները Պոլսում, Տրապիզոնում, Երզնկայում... որոնց հետևում էին հայ հրոսակախմբերի վրէժխնդրական գործողութիւնները, կառավարութիւնը խիստ միջոցների դիմեց և սահմանները ամրացնելու համար հարիւրներով զօրք թափեց այս կողմերը: 400 զինուոր միայն Աղբակի Բարդուղիմէոս Առաքելի վանքը լցւեցան, վաճառելով վանքից վանահօրը իր մարդկանցով: Աւելորդ է գրել մի առ մի, թէ ի՞նչ խժոժութիւններ էին կատարում սուլթանի կանոնաւոր զօրքը և իր անւան նոյնքան արժանի Համիդիէ գնդերը: Վօթուրի սահմանների պահպանութիւնը յանձնուած էր մլանցոց, մօկուրցոց և բագուրցոց ցեղերին, որոնց միացած էր Սարայի 150-ից աւելի սահմանապահ զօրքը և ոստիկանները: Հոկտեմբերի 25-ն է, մի ցուրտ առաւօտ, որը յատուկ է աշնանային օրերին, երբ լեռների լանջերն ան-

գամ ծածկուում են ձիւնով: Դաշնակցութեան հրոսակային խումբը, որին միացել էին և 16 արմենականներ, չկարողանալով հասնել իր նշանակած տեղը, լոյսը բացւելով ստիպւած մնում է Չեօլ-Չիմանում, Սարա գայմագամանիստ գիւղաքաղաքից ընդամենը մի ժամ հեռաւորութեան վրայ: Մոգէպի արեւելք: Մլանցոց, մծկուրցոց և թագուրցոց ցեղերը՝ մի ահագին բազմութիւն՝ բաղկացած մօտ 1500 ձիւաւորներից, որոնք վիտում են գիշեր ցերեկ դաշտավայրում, նկատում են հրոսակախմբին, որը միակ ապահով տեղ դաշտավայրում ընտրել էր մի փոս տեղ: Սկսում է կռիւը, մի սուկալի ճակատամարտ երկու անհաւասար ոյժերի մէջ. 60 հոգուց բաղկացած խումբը իր միանգամայն անապահով դիրքից կռիւ է մղում 1500 ձիւաւոր քրդերի և Սարայից օգնութեան եկած կանոնաւոր զօրքերի դէմ: Կռիւ մանրամասնութիւնները պակասում են, որին կը դառնամ յաջորդ անգամին տեղեկութիւններ ստանալուց յետոյ: Մեր ունեցած տեղեկութիւնների համաձայն, կռիւը տեւում է մինչև երկրորդ օրւան երեկոն, ուրեմն երկու ցերեկ և մէկ գիշեր: Այդ երկար ժամանակամիջոցում խումբը քաջութեամբ դիմադրում է թշնամուն, զոհ տալով իր ընկերներից 6 հոգի: Երկրորդ գիշերը խումբը կատաղի յարձակում է գործում, որպէս զի ձեզքի թշնամու զօրեղ շղթան և ապաստանի մտակայ լեռներում: Քաջութեամբ կատարելով իր որոշումը և հերոսական այդ յարձակման մէջ մի զոհ և մի վիրաւոր տալով, ձեղքում, խորտակում է շղթան և անընդհատ կռիւ մղելով ամբողջ գիշերը, ամրանում Սարայից 3 ժամ հեռաւորութեան վրայ՝ դէպի հիւսիս-արևելք գտնուող Մամադալանայ-Կուեք կոչւած քարաբլուրներում: Պէտք է յիշատակել, որ խումբը չէ մոռանում վերցնել իր հետ փոսի մէջ նահատակած իր 6 ընկերների զէնքերը:

Բացում է առաւօտը. ապաստանած Մամադալանայ-Կուեքում, քաղցած, յօգնած, գրեթէ ուժասպառ, խումբը շարունակում է դիմադրել իրեն հետապնդող թշնամուն, ամբողջ օրւայ ընթացքում տալով 3 զոհ: Այսպէս ուրեմն երեք օր ու գիշերայ անընդհատ կռիւ մէջ խումբը կորցնում է 10 ընկերներ: Թէ որքան է ընկած թշնամուց, ճիշտ յայտնի չէ. կառավարութիւնը 3 քիւրդ և 8 ընկած զինւորի հաշիւ է տալիս, մինչդեռ մենք շատ լաւ գիտենք՝ թէ ինչ սովորական խաղ է այդ տաճիկ կառավարութեան և մանաւանդ քիւրդ աշխրթների կողմից: Քիւրդը ամօթ է համարում ցոյց տալ կռիւի մէջ իր կողմից ընկածների և վիրաւորեալների ճիշտ թիւը: Շղթայած լինելով խմբին, միջոց ունենալով յարաբերութիւն պահպանել

շրջակայ քրդաբնակ գիւղերի հետ մի կողմից՝ և միւս կողմից Սարայի կառավարութեան հետ, որից միշտ ուղմամթերք էին ստանում, քրդերը կարողացել են ծածկել ընկերների և վիրաւորեալների ճիշտ թիւը, որը ժողովրդի մէջ տարածւած լուրերի համաձայն հասնում է 80-100-ի:

29-ի առաւօտը խումբը գտնւում էր Հաջի-Ղալա գիւղի շրջակայքում, որը հայաբնակ Բօլազ-Քեասան գիւղից գտնւում է 1 ժամ հեռաւորութեան վրայ:

Շամկցոց ցեղը թշնամական յարաբերութեան մէջ լինելով մօկուցոց և մլանցոց հետ, չի ցանկացել նրաց հետ միացած կռիւ մղել հրոսակային խմբի դէմ: Միանալով հաջի-ղալազի Ջնդի անունով և ուրիշ մի քանի քիւրդ ցեղապետների հետ, ցրած Հաջի-Ղալա գիւղի շրջակայքում, սպասում էին հանդիպելու հրոսակա խմբին: Ահա և երևում են կրակ դարձած հրոսակները... սակայն քիւրդ ցեղապետները մտածում են դիմել խորամանկ միջոցի:

— «Եկէ՛ք, անձնատուր եղէ՛ք, յայտարարում է խմբին քիւրդ ցեղապետների պատգամաւորը, ափսոսացէք ձեր երիտասարդ հասակին, տեսա՞ք ինչպէս 2 իբուխուր գիւղում առանց որ և է ընդիմադրութեան անձնատուր լինելուց յետոյ, տարան Ստամբուլ և զգատ թողին, ձեզ հետ ևս այդպէս կը վարւենք, միայն առանց կռիւ անձնատուր եղէ՛ք»:

Խումբը շատ լաւ ըմբռնում է իր նենգաւոր թշնամիների միտումները:

Այստեղ փոքր ինչ շեղւենք: 2 իբուխուր գիւղը, որտեղ սուս ու փուս անձնատուր եղաւ անցեալ դարնան հնչակեանների 16 հոգուց բաղկացած խումբը, գտնւում է Հաջի-Ղալաից ընդամենը երկու ժամ հեռաւորութեան վրայ, դէպի հարաւ-արևելք: Եղիզների ցեղապետ Խատօն ընդունեց խումբը իր տուն և հացի ժամանակ զինւած եղիզնոի միջոցով պահանջեց անձնատուր լինել. խումբը առանց ընդդիմադրութեան՝ ցած դրեց իր զէնքերը: Եղիզի ցեղապետ Խատօն, որպէս վարձատրութիւն իր սամարդի վարմունքի, արժանացաւ սուլթանի պարգևներին և շքանշաններին:

Ահա թէ ինչի էին ձգտում Հաջի-Ղալա գիւղում հաւաքւած ցեղապետները. «հայ կաջաղներին» ձերբակալել առանց ընդդիմադրութեան, առանց մի կաթիլ արիւն թափելու և արժանանալ «մեծ սուլթանի» առատ պարգևներին...

— «Շատ լաւ, պատասխանում է խումբը. եթէ այդպէս է, թող գան մեզ մօտ ձեր ցեղապետներից 10-20 հոգի, բազմ տան, երգեն, որ չեն յիսախել

մեզ և մենք անձնատուր կը լինենք»:

Ցեղապետները համաձայնուով են և հեծած գեղեցիկ նժոյգների վրայ, սլանում են դէպի խումբը, իրանց մտքերի մէջ փայփայելով անշուշտ այն շնորհները, որ մօտիկ ապագայում պիտի ստանան սուլթանից...

Երբ բաւական մօտենում են՝ հրացանի գնդակի տարածութեան չափ, միաժամանակ պայթում են հրոսակների հրացանները և ցեղապետներից 12 հօգի թաւալգոր փուլում են ցած...

Բարձրանում է սուկալի աղմուկ քրդերի կողմից, ըսկսում է հրացանաձգութիւն. շամշկցիք, բացի 12 ցեղապետներից, 3 դիակ և 3 վիրաւոր թողնելուց յետոյ փախուստի են դիմում. իսկ քաջարի խումբը՝ օգուտ քաղելով քրդերի գլուխ կորցնելուց, առանց որ և է վնասի, իր հետքը կորցնում է Աղթա-Գաղի բարձունքներում...

Սպանւած քիւրդ ցեղապետներից յայտնի են՝ Հաջի Ղշաղայ Զնդին, որը մանաւանդ վերջին տարիների ընթացքում մի սուկալի չարիք էր շրջակայ հայաբնակ գիւղերի համար, նորա եղբայրը և որդին, Հասիստանայ Իբրահիմ աղան, Կարթալունայ Շաւէշ աղան. միւսների անունները դեռ ևս յայտնի չեն:

Հրոսակախմբին ձեռքակալելու համար Ղանից գնացել է մի զօրաբանակ 5 լեռնային թնդանօթներով:

Տեսնենք...

Մինչև Հաջի-Ղշաղի կռիւը մշանցիք և մօկուրցիք յարձակում են Սարա գիւղաքաղաքի վրայ և ամբողջովին թալանի ենթարկում: Բնակիչները, որոնք բացառապէս ասորիներ են, ապաստանում են շրջակայ լեռներում և գիւղերում: Երբ Շաւէշ աղայի դիակը անց են կացնում Հասիստու հայաբնակ գիւղով, քըրդերը իրենց վրէժը լուծելու համար, մորթում են տեղն ու տեղը 10 հայ: Սահմանակից Աղբակ, Գեաւառ, Մհամդան և այլ գաւառները ենթարկւած են վրէժինդրութեան. զօրքերը և Համիդիէ գնդերը ցրւած են ամեն կողմ: Սպանութիւն և թալանը սովորական երևոյթ են դարձած: Պարսկաստանի և Տաճկաստանի վաճառականական յարաբերութիւնը ամբողջովին խզւած է. պարսիկները ահագին վնասներ են կրում: Ղանի մասին որոշ լուր չկայ. թէ հայերը և թէ կառավարութիւնը պաշտպանողական դիրք բռնած՝ սպասում են՝ թէ ո՞վ կը տայ սուկալի կուրի առաջին նշանը...

Այսօր լուր առանք, որ ասորիները Մար-Շիմոնի առաջնորդութեամբ մեծ ընդհարումներ են ունեցել քըր-

դերի հետ. ասորիներին զսպելու համար կառավարութիւնը զօրք է ուղարկում:

Կ Ա Տ Ո Ր Ա Ն Ն Ե Ր

Բ Ա Ղ Է Շ Ի Ց

Տեղիս կոտորածի մասին անգամ մը տեղեկութիւն տւած եմ. հազարէն աւելի է կոտորածին թիւը: Կոտորածը սկսաւ ուրբաթ օրը, ժամ 5-6-էն մինչև 12-ը: Աննկարագրելի էր տեսարանը, թուրքերը սրով, բրով հրացաններով զինւած յանկարծ յարձակեցան անպաշտպան հայ ժողովուրդին վրայ և սկսան անխնայ ջարդել. շուկային մէջ, փողոցներուն մէջ, ուր որ հանդիպեցան. շուկան արտ ու կալ ըրին. մինակ երկու խան ազատեցաւ, ուր ապաստանող հայերը 4 օր դուրս չեւան. 4 օրէն վերջ կառավարութիւնը եկաւ այդ թըշուառները տարաւ բանտը լեցուց՝ ըսելով, որ դուք էիք խողովութիւն հանողը և դուք էիք, որ մեր մզկիթներու վրայ յարձակեցաք և դեռ լեցուն են բանտերը, չենք գիտեր՝ վերջը ինչ պիտի ըլլայ: Իսկ ողջ մնացողներս խնթի պէս եղած ենք, տուններուն ներսը գամւած մնացեր ենք, հոս մարդ չունինք, որ մեզի օգնութեան հասնին, ա՛նօթի, ծարաւ, մեր կեանքը քայքայւել սկսաւ, օգնութիւն ի սէր հայութեան, ի սէր Աստուծոյ շուտ, շուտ հասէք, ապա թէ ոչ մեր դիակները պիտի գտնէք հիւժւած, դժգոյն և սրտաձմիկ, խեղճ բաղէջցիներուն տունները իրենց դամբարանները պիտի ըլլան. ոչինչ մնաց մեր տուններուն մէջ, կոտորածէն վերջն ալ նորէն սկսան հայ տունները թալանել և չոր հաց մը չը թողուր:

Բազմաթիւ սպանւածներ ալ կան կիներէն և մանուկներէն, իսկ վախէն մեռնողներ ալ շատ են: Մարդկային գրիչները չեն զօրեր այս կսկծալի, ահռելի աղէտը նկարագրել: Բաղէշ «արտասուաց հովիտ» մը եղած է իրապէս. մեր կիներն, որբացած մանուկներուն արցունքները հատած են և իրանց աչքին լոյսը մարած. միայն կը լսի իրենց չոր լաց ու կոծը, հեկեկանքը և հառաչը: ՔՎ պիտի միտթարէ Բաղէշը, ո՞վ պիտի դայ սիփփանքի բառ մը արտասանել թշուառ հայութեան, որ իր ծնած օրը կանխէ:

Հապա՛ գիւղերու վիճակը, անտէր անտերունջ այդ պզտիկ գիւղերուն ճակատագիրը աւելի դառն է. սարսափելի լուրեր կաննինք շրջականերէն. կողոպտում, սպանութիւն, 22 գիւղեր աւերակ և սրոյ ճարակ եղած են, միայն մէկ գիւղ ազատւած է, անոնք ալ մահմեդականութիւն կընդունին անոր համար:

Տատիկու քանի մը գիւղեր տեղացի քրդերէն պաշտպանւելուն վնաս եղած չէ: Իսկ միւսներն ամբողջ վրջացած են: Խուլթիկ 50 հօգի սպանւած և գեղն ալ

պարպած են. այնպէս որ վախ կայ՝ թէ ամենքն ալ սովամահ պիտի կորնչին, եթէ անմիջական օգնութիւն չընենք: Արեւիկայի Կորու և Ներքին Կորու բոլորովին ոչընչացուցին. Խառնակող միայն մոխիրները մնացին: Հաղբատու գիւղերէն մենակ Հաղաղ կողպատած են, միւսները դեռ ազատ են. իսկ ուրիշ 8 կտոր գիւղեր ալ թալանւած և ջարդուած են:

Կառավարութիւնը հայոց դիակները յանձնեց, զորս թաղեցինք Կարմրակ և ս. Գէորգ եկեղեցիներուն կից՝ խորունկ հորերու մէջ, մաս մը քարիւղով պրեցին, իսկ մեկ մասն ալ իբր թուրք, տաճիկները տարին իրենց մեղարկուած թաղեցին:

Գիակները բոլորն ալ ադամային մերկութեամբ էին և շատերը անձանաչ. թուրքերը իրենց գազանութեամբը չը կշտացած, բոլոր մեռելները կողպատած էին, մինչև իսկ անոնց վարտիկները: Թուրքերէն ոչ մէկ հոգի չէ մեռած, վասն զի հայերը նախ իրենց գործերուն էին, երկրորդ՝ կառավարութիւնը կանխահոգ մտածութիւնով մը բոլոր հայերուն զենքերը ժողւած էր:

Անգէն ժողովուրդը մեռնել միայն գիտէ: Եթէ մեր ձայնը արձագանք կը գտնէ հայերուն սրբոտին մէջ, բոլոր մեր մարած ուժովը կաղաղակենք, օգնութիւն... իսկ եթէ մեր ձայնը անզոր են հայ սրբոտները շարժելու, կը մեռնինք մենք մեր լեղի ճակատագրին տակ ընկճուած...



Շ Ա Պ Ի Ն-Գ Ա Ր Ա Հ Ի Ս Ս Ր

Շապին-Գարահիսարի կոտորածի մասին նախորդ թղթ-թակցութեամբս վեր ի վերոյ տեղեկութիւն մը տւած էի. ներկայիս կուգամ մի քիչ ընդարձակ տեղեկութիւն տալ:

Արօրակայ դաշտի հայ գիւղերը աւերակ դարձնող թուրք և քիւրդ լեռնցի խուժանին անպատիժ մնալնէն զատ, կառավարութեան կողմէ նոցա տրւած ուղղակի կամ անուղղակի քաջալերութիւնը տեսնալով՝ Ալեքոբա գիւղախմբի աւագակ ժողովուրդը, որ ամբողջովին թուրքէ կը բաղկանայ և քաղաքէն մէկ ժամ հեռաւորութեամբ գտնուող Ավութմուշ ըսւած այգիներու սրիկայ երիտասարդութիւնը իրենց աւարառական տենչին յապուրդ տալու յարմար առիթը չի փախցնելով՝ առաջնորդ կընտրեն ավութմուշցի «Փաշա» անուն հանրածանօթ սրիկան և կը յարձակեն քաղաքի վայր:

Այս կատաղի խուժանը, որուն թիւը հաւանօրէն 3-4 հարիւրի կը հասնէր, նախ Թամզարայի վոյս խուժելով հայոց բոլոր տունը և խանութ կը կողպատեն և բնակիչները բոլորովին կը մերկացնեն, յետոյ քաղաքին արևելեան կողմէն, ուղղակի շուկայի կեդրոնը հասնելու դիտումով յարձակում կընեն: Այդ կողմը գտնուող հայերը տուներէն տեսնելով գազաններու բազմութիւնը՝ կը փութան կրակ ընել անոնց վայր, որք խոհեմութիւն համարելով և չուզելով հայու գնդակով սատ-

կել՝ կը դառնան Փրկչեան թաղի վոյս նոյն թաղը բընակող բնակեանցի սեղանաւոր Գասպար աղան նոյնպէս պատուհանէն կրակ կընէ. խուժանը ճամբան կը դարձնէ գերեզմանոցին շուրջը գտնուող հայ տուներու կողմը և կսկսի գործի: Տէվէքբեյեանի, Այնաճեանի, Քորմանեանի և ասոնց շուրջը եղած բոլոր տները կը կողպատեն, գերեզմանոցին միւս կողմը գտնուող Թանչուտեանի, Տէր Եղիա քահանայի, Սամէլեանի, սեղանաւոր Ղազար աղայի և Թաշճեան Միսաք աղայի տները հիմնովին մոխիր կը դարձնեն, ասոնց կարգին գտնուող Տէր Մեսրոպեան Կարապետ աղա անուն ցած հայուն տունը կողպատելով զինքն ալ կսպանեն իւր որդւոյն հետ: Ասոնք լրացնելէ վերջ, խուժանը կը յարձակի շուկայի վոյս: Երկու քարաշէն պանդոկներու տանիքները վախէն ապաստանող ժողովուրդը՝ տեսնելով թշնամիին յառաջանալը, կսկսի նոյնպէս հրացան պարպել անոնց վոյս, որք օտարոտի շուններու պէս պրչերնին ներս քաշած կը նահանջեն և այսպիսով սպաննացող անխուսափելի վտանգէն կազատին վերի և միջին թաղերը, որք ամբողջ հայաբնակ են և շուկայի մեծագոյն մասը, շնորհիւ փրկարար դնդակին: Երկու թուրք սրիկայ՝ միւսարէն բարձրանալով պանդոկներուն տանիքները եղող ժողովուրդին վոյս կրակ կընեն և երկու մարդ կսպանեն: Անդրանիկ Պարոնվարդեան անուն պատանին յիսուն գազաններու մէջ բաւական կուռելէ վերջ կսպանելի: Քաղաքին սպանուածներու թիւը 56 է, իսկ վերաւոր աւելի. կողպատուած են նաև 80 տուներ, ուր աւել մը անգամ չեն ձգած:

Ճշմարիտը խոստովանելով, թուրք կառավարութիւնը շատ լաւ գիտէ վարձատրել իւր հաւատարիմ շունները, ինչպէս վարձատրեց Տէր Մեսրոպեան Կարապետ աղան և Քոթոթեան Անտոն աղան, որուն տունը ամբողջ թալանած են. շահախնդիր ցածերը այդ արժանի վարձատրութեան կսպասէին. թուրքին համար պահած էին իրենց գանձը, որուն մէկ հարիւրորդը զւսցած էին յեղափոխական սուրբ գործին և շատ անգամ ալ յեղափոխականներու բարոյական և նիւթական վնասներ հասցնելէ զատ՝ ազգը ամեն կերպով կը քամէին իրենց և աւելին թուրքի օգտին համար:

Կատաղի խուժանը քաղաքին վերի մասին մէջ մուտք գտնելու յոյսը կտրած, աւելի կատաղութեամբ կրկին կը յարձակի Թամզարայի վոյս և այս անգամ կսկսի ջարդը: Մեռած են 170 հոգի, որոնց անուններն յայտնի չեն, միայն Գազանճեան Մկրտիչ աղան և Գըրքեսեյեաններու մի քանի եղբայրներու անունները յայտնի են դեռ:

Քաղաքին շրջակայքը գտնուող հայ գիւղեր՝ Անեղզի, Պուսէյիտ, Ծիպէուի և Զըրտըտի գիւղերը բոլորովին ջարդուած և հիմնայատակ եղած են. Զիպէուի ս. Յակովբ վանքը կողպատուած է. գտնուած է խնձորի մեծութեամբ ոսկի գնդակ մը, որ կարևոր հնութիւն մըն է եղեր և հոն իրենց քիչ թէ շատ խելացիներու կողմէ 2000 ոսկուոյ գին կը որոշուի. յայտնի է թէ հնագէտ մը շատ աւելի պիտի ձանձնայ անոր յարգը: Թամզարայի երեք եկեղեցիներէն 390 օխայ արծաթեղէն կը

տանն, որ կատարելապէս հաստատուած է:

Թամզարացի կիներ, որոնք հազիւ ազատեր են սուրէն, մերկ և բոբիկ երեք օրւան ճամբայ քալելով Կիրասուն կը հասնին, ուր կը պատսպարւին իրենց ազգականներէն:

Այդ դէպքէն մի քանի օր վերջ քաղաքէն նորընտիր կառավարիչը և ընդհանուր դատախազի օգնականը իրենց պաշտօնատեղէն կը հասնին և դէպքին վրայ տեղեկութիւն հաւաքելով. փոխանակ չարագործները որոնելու սեղանաւոր Գասպար աղան կը կանչեն և կստիպեն, որ զէնքերը յանձնէ կառավարութեան. իսկ նա բացարձակապէս կը մերժէ, մատնանիչ ընելով իւր տան և իւր թաղին ապահով մնալը և կը շեշտէ ըսելով՝ «Թէ՛ այդ շնորհիւ իմ զէնքին է՛» ատոր վրայ իրեն թուղթ մը կը ներկայացնեն, ուր սիրով կատորագրէ՝ «Թէ՛ յից հարւածեան մը, որսի հրացան մը և դաշոյն մը ունիմ անձնապաշտպանութեան համար»:

Թուրքին կողմը բնաւ վնաս չէ կրած. փորձով տեսնեցաւ, թէ ով որ զէնք արձակեց, անվնաս մնաց. մէկ գնդակէն 3-400 հոգի կը փախչէին, հետեւաբար եթէ հայը ամբողջը զինեալ ըլլար՝ բնաւ վնաս չի պիտի կրէր: Թող սատկե՛ն այդպիսի հարուստները, որք երես դարձուցած են ազգէն, բարեկամներէն...

Ք Է Մ Ա Խ Ի Յ

ԿՈՂՈՊՏՈՒՄԸ ԿԸ ՇԱՐՈՒՆԱԿԻՒ

Գրած էինք նախորդ թուով, Քէմախի քանի մը գիւղերուն ցաւալի վիճակի մասին. այսօր կը շարունակենք նշանակել մնացածներուն կրած չարչարանքը ու տառապանքը:

Քիւրդերը, որոնք պաշարած էին Հազարք գիւղը, վերջապէս կը յարձակին իրենց որսին վրայ: Հոկտեմբեր 5-ին երբ, նոյն գիւղի բնակիչներէն, Տիգրան և Քէրոբ ջրաղաց կերթային 6 ջորիով, յանկարծ վրանին կը յարձակին քիւրդերը, դիւղէն քիչ մը վար, կը կապեն ու ջորիները, ցորենը առնելով մէկ տեղ կը քշեն գետէն անդին: 2որս ժամէն կը հասնին Ղարա-Ղաեա ըսւած տեղը, ուր կը գիշերեն: Գիշերը մինչ քիւրդերը իրենց աւարով գոհ կը քնանան, Տիգրան և Քերոբ կը յաջողեն կծիկը դնել ու գիւղ կուգան եղելութիւնը իմաց տալու: Գիւղացի երիտասարդները իրենց զէնքերը առած՝ իսկոյն հոն կը վազեն: Բաղխումը թէ և զօրաւոր՝ բայց առ ի չգոյէ վառօդի, գիւղացիք կը հարկադրեն մարթինի զօրութեան տեղի տալ ու պարապ ետ կը դառնան:

Մարեգ գիւղը, Հազարքի սահմանակից, որ կէս մը կողոպտուած էր արդէն, միւսնոյն ատեն իր վերջնական յարձակումը կրեց: Քիւրդերը կը հրամային տաճիկ

բնակիչներուն, որ իրենց տուները քաշին, իսկ հայերը, թէ և անպաշտպան, յուսահատօրէն կը կուրին թըշնամոյն դէմ: Անկարելի է նկարագրել այն իրարանցումը, երբ քիւրդերը, բռնութիւնով, կը քաշեն հայերու տնէն անոնց կահ կարասին, ուտելիքը ու վերջապէս կեանքի անհրաժեշտ պէտքերը: Խեղճ գիւղացիներ, ինչ ընեն, որո՞ւ դիմեն: Հիմա անօթի, ծարաւ իրենց դրացի տաճիկներուն երեսը կը նային՝ գթութեան նշոյլ մը յուսալով, բայց ընողը ո՛վ, ընել տւողը ո՛վ...

Թորթան գիւղը շատ աժան ազնւոցաւ: Բնակիչները բոլորը հայ ըլլալնուն, քիւրդերը իբրև տուգանք առած են միայն գիւղին ամբողջ ջորիները, եզները, ոչխարները ու այծերը և 50 ոսկի:

Միակ Գոմեր գիւղը, որ մինչև ցարդ զերծ մնացած կը կարծէր կառավարութեան և քիւրդերու հարածներէն, որու բնակիչները մեծ մասամբ հայ և փզր մաս մ՝ ալ տաճիկ են, շնորհիւ գազան սուլթանին, այս ևս իր հայութեան արժանաւոր պատիժը կրեց:

Վերը պատմած դէպքերէն երկու օր վերջ, քիւրդերը կառավարութեան մարթիներով զինուած՝ կը մտնեն գիւղ: Առաջին գործերնին կըլլայ գիւղին ամբողջ ոչխարները քշել տանել, որոնք կը պատկանեն թէ՛ հայերու և թէ՛ տաճիկներու: Յետոյ կը հրամայեն տաճիկներուն, որպէսզի իրենց ունեցածները տուն քաշեն ու նստեն: Հայերուն ջորիները բերել կուտան, յետոյ գիւղին ամենէն վարի ծայրէն սկսելով, բոլոր տուները այրել են և անոնց մէջի գտնուածները, անկողին, կահ կարասի, ցորեն, ալիւր, իւղ, ամաններ և մինչև իսկ տանը աւելը կը բեռնեն ջորիներուն, ու կը ղեկեն իրենց տեղերը, 4 օր կը տևէ այս աւարառութիւնը, երբ այլևս բան չը մնար՝ ջորիները կը հեծնեն ու կը քշեն, կերթան: Գիւղացիներուն կը ձգեն միայն տանը չորս պատերը: Ինչ կրնեն սյս թշուոնները հիմա: Հաւանականաբար կամ մեռած են և կամ քիչ օրէն վերջը, երբ ձմեռը գայ՝ ձերմակ ձիւնին տակ պիտի քնանան յաւիտենական քունը...

Կառավարութեան դիմեցինք: Կառավարութիւնը կրէ՛ թէ յ՛ուրբ մեզմէ բաժանւեցաք, մեր ձեզի չենք խուսելի, դուք ձեր գիտցածը ըրէք»:



Օ Ր Դ Խ Ի Յ

Ամսոյս 3-ին, ուրբաթ օր՝ ժամը 4 ու կիսին ատենները սարսափելի յարձակում մը կրեցինք՝ առաջաւանէն աւելի զօրաւոր:

Ձեմ՝ կրնար գրչի առնել տեսած ու լսած, յուզիչ ու սրտաշարժ տեսարանը:

Ուրբաթ առտուն ամեն մարդ շուկայ իջած էր, երբ լուր մը տարածւեցաւ՝ թէ չավուշ դիւցազն Գանիկ 800 հեծեալ յեղափոխականներով և մէկ բեռ ալ վառօր ու գնդակ հետերնին՝ եկած են եղեր Օրդուի

շրջակայ գիւղերը ու ամբողջ թրքերը սրէ անցկացնելով՝ կրակի տւեր են գիւղերը: Գայմագամը անմիջապէս կը բանտարկէ այդ լուրը տարածողները ու շուտով «սիւլարիներ» կը ղրկէ գիւղերը հասկնալու համար՝ թէ որ աստիճան ծշմարիտ է այս տարածայնութիւնը, որպէս զի անոր համեմատ միջոցներ ձեռք առնէ:

Մենք արդէն իսկոյն հասկցած էինք այս շինծու պատմութիւնը: Այս խնդիրը յարուցանողները նոյն անձերն են, որոնք առաջի յարձակման փորձին մէջ չը յաջողեցան: Այս չարամիտներն էին Շըլի օղլու Քասրաման, Ղաթրճը օղլու Մուսթաֆա և Բէթիլի պաշտօնեայ Ասիմ էֆէնտիները: Այս երեք անձերը կը յուզեն և ոտքի կը հանեն գիւղացիները, այնպէս որ ամեն գիւղերէն միւսոյն ժամուն մարդիկներ կուգան ու կը պատմեն՝ թէ «կեանքուրար պիզի պասթիլար» — քրիստոնէաները (հայերը) մեր վրայ յարձակեցան: Շուտով այս լուրը հեռունները տարածւեցաւ, գիւղէ գիւղ, մինչև Սինոպ: Թէև դեռ «սիւլարիները» չէին վերադարձած, բայց գայմագամ բէյը կուսած էր խնդրին հոգին:

Յանկարծ երկու ձիււորներ՝ սուրերը քաշած, վազիվազ, հեւալով, կառավարութեան դուռը կը դիմեն. մէջ մը ալ կսկսեն զէնքեր պարպել շուկային մէջ, սոսկալի փոթորիկ մըն է կը փրթի: Նկարագրել զժւար կը լինի այդ պահուն պարզած տեսարանը. խանութները բաց՝ փախչող փախչողի կը լայ: Արծանակներու ձայներուն հետ մէկտեղ կողոպտել կը սկսեն խանութները: Թուրք խուժանը՝ սուրը մէկ ձեռքը բռնած, ատրճանակը միւս ձեռքը, շուկային մէջ իրարանցում մը առաջ բերաւ: Այդ միջոցին ես տունը կը գտնուէի. երբ տեսայ կանանց վայնասունը, աղջիկներուն աղաղակը, մանր տղայոց պոռչտուքի ձայները, որոնք օդը կը թնդացնէին, շարեցայ, զիս դժոխքի մէջ կը կարծէի: Շուկային կողմը դառնալով, տեսայ, որ շուկան ծածկած էր անպով. շիտակը ի՞նչ ընելը չէի գիտեր, մանաւանդ կանանց աղէխարչ սուր ձիւները զիս կը թուլացնէին: Վանայք «ղաւակ» կը պոռան, օրիորդներ՝ հայր ու եղբայր կուլան, սիրտ կուզէ դիմանալու: Բուն այս փոթորիկի ատեն, պինպաշի Հիւանի պէյ գայմագամի մօտ երթալով, կառարկէ՝ թէ ինք փող պիտի հնչեցնէ. — «քանի որ հայերը մեզ կոխեցին, կըսէ, ես ալ քաղաքին մէջի հայերը պիտի ջարդեմ»: Գայմագամը, որ խոհեմ մարդ մը կերևայ, շատ կաղաչէ հազարապետին, «ատոնք սուտ խօսքեր են, ականջ մի՛ կախէք», կըսէ լալով: Սակայն Հիւանի պէյ կրկին փող հնչել կուզէ ու արդէն պատրաստած էր, երբ գայմագամը պատահելիքը նախատեսելով, հազարապետին ձեռքէն փողը խլելով, հսկողութեան եղանակը կը հընչէ: Օրդուցիք այդ օր ազատուած էին:

Գրեթէ կէս ժամ փախչող փախչողի էր:

Եթէ զափթիկ պաշի Եսհայ էֆ, բոլիս Միրաձ պէյը և Իբրահիմ րէիսը հանդէս չգային, անօգուտ ջարդ մը տեղի պիտի ունենար. փողոցները դիակներով պիտի լեցնէին: Շատ մը կիներ, մանաւանդ յղիներ, անկողնոյ կը ծառայեն սարսափէն: Եթէ ջարդը շարու-

նակէր, բնաւ մի անձ չպիտի կրնար պրծնել, որովհետև բոլոր երիկ մարդիկ շուկան էին: Այդ սրտաձմրիկ ուրբաթ օրը ժամը 9-ին, տուն չէր մնացած, որ չը կողոպտէր ու վերաւորներ չտար: Խեղճ գիւղացի ժողովուրդը՝ յուսահատ վիճակի մէջ, ձեռքը ծոցը շուկան կուգայ, չունի հաց ուտելու: Սարսափը շատ մեծ է: տեսնենք՝ վերջերնիս ի՞նչ պիտի ըլլայ, զի դեռ վտանգը չէ անցած: Այսօր կամ վաղը մեծ երկիւղի մէջ է Օրդուն: Թուրքերը կառավարութեան կը պնդեն՝ թէ «մենք կոտորած պիտի ընենք»:

Կիմանանք թէ Տրապիզոն բանտին մէջ 4 անձինք շղթայակապ ծանր տանջանքներու կենթարկուեն, «ընկերութենէն էք», ըսելով: Երկու հոգիի անունները միայն իմացանք. վաճառական Շաւարչ և փաստաբան Շահրիկեան:

Այս օրեր Ռուսիա դաղթողներ շատ կան: Տրապիզոնէն, Թրիէպոլիէն և Կերասոնէն, նոյնպէս ասկից ալ այս շաբթու 40 երիտասարդներ պատրաստուած են մեկնելու:

Թուրք խուժանը մինչև հիմակ մեզ վերցուցած էր, եթէ Օգոստոս 13-ին՝ մահասարսուտ Սասունի Տարիդարճը չը տօնէինք. այն ատեն ըրած ցոյցերնիս մեծ սարսափ ազդեց թուրքերուն. մեր արձակած հրացաններուն ձայները սարսուացուց Օրդուն:

Հոկտեմբեր 28-ին զօրքերը հաւաքուել սկսան: Թէ լաթիֆ, թէ իհրիլաթ և թէ մուստահֆըզ զօրքերը, երկուշաբթիէն սկսեալ մինչև հինգշաբթի ժողեցան 1500 հոգի: Այս զօրքերը գալու ժամանակ շատ մը տուններ այրեցին, երեք երիտասարդ սպանեցին: Նոր գայմագամիս առ այժմ բարի մարդ մը կերևայ, առանց ասոր միջամտութեան, շատոնց մեզի քշած ու անդիի աշխարհը ղրկած էին:

Զօրքերը եկած ատեննին, կը պոռային թէ «հայերուն երեսէն մեզի կը ղրկեն կոր պատերազմի»: Եկած օրերնին, երկուշաբթի երեկոյին, ժամը 11-ին՝ պայտառ Ղալիօնճեան Օհաննէսին տասը հոգիով սարսափելի ծեծ մը կուտան իր խանութին մէջ. այժմ կիսամեռ անկողնոյ կը ծառայէ. երկու մուհաճիր երիտասարդներու շնորհիւ՝ հազիւ կըրցաւ մահաւան ձիւրանէն ազատիլ: Գայմագամը սկսաւ բանտարկել չարագործները:

Այսպէս, ամեն օր վատ լուրեր կիմանանք մեր դիւղերէն: Հայաստանի գիւղերուն վիճակակից եղանք մենք ալ. սիրտ կուզէ մէկիկ մէկիկ զանոնք պատմել ու համար: Տեսնենք մեր բաղդը ո՞ր կը հասնի...

Ն Ա Մ Ա Կ Պ Ո Ղ Ս Ի Յ

Գաւառներէն կը շարունակին կսկծալի լուրեր. հասնել. կատաղի գազանները վայրագ արագութիւնով յառաջ կը տանեն կոտորածը, թալանն ու աւերումները: Կարգը Կեսարիային, Եղզադին ու Մարզանին եկաւ:

Ատ տեղերէն հասած «Տոգինիս ողջ է» հեռագիրները սոսկալի իմաստ մը կը պարունակեն: Պոլսի մէջ խելակորոյս կառավարութիւնը տարբեր ձևով կուզէ բնաջինջ ընել, այս օրերս անթիւ ձերբակալութիւններ կը լլան, մանաւանդ գաւառացիներէն. մարդ մը փողոցին մէջ կերթայ, բաւական է, որ ոստիկան մը անոր հայ ըլլալը հասկնայ և ընդհանրապէս առանց ուրիշ պատճառի կը ձերբակալեն. հարցաքննութիւն կամ մանրամասն խուզարկութիւններ չկան. միայն մարդուն անունն ու ուր տեղացի ըլլալը հասկնալէ վերջ կաքորեն. բայց սատանան միայն գիտէ թէ ուր, շատերը ծովին յատակը կիջնեն. ցամաք ելլողներն ալ անօթութենէ կամ տանջանքներէ կը մեռնին: Այս յայտնի կորուստը գիտնալով մէկտեղ, դեռ խեղճ հայերը կը շարունակեն առանց որ և է ընդդիմութեան անձնատուր ըլլալ. դեռ չգտնուեցաւ հայ մը, որ արհամարելով մի քանի աւուր անտանի կեանքը՝ զարնէր կամ զարնուէր: Միթէ ժամանակը չէ սթափելու, մինչև երբ այսպէս շարած մնանք:

Գիշերները փողոցներու մէջ շրջող ոստիկաններն ու լրտեսներն առիթէն օգտուելով, կամ աւելի անօթութեան հարկին տակ սկսած են աւազակութիւն ընել: Բերա հայ մը սպանւած ու կողոպտուած է լրտեսներու ձեռքով. կալաթա ոստիկան մը ու լրտես մը սերաստացի հայու մը օձիքէն բռնելով՝ յափշտակած են անոր քսակը: Պոլսի փողոցներու մէջ, անշուշտ ի վնաս հայերու, շրջող զինուորներու թիւն աւելցած է. կերեւայ թէ հոտ մը առած են, կամ յիմար սուլթանը, մոլեգնութեան վայրկեաններուն երազ մը տեսած է:

Գաւառներու հետ կանոնաւոր յարաբերութիւններ դադրած են: Եկած նամակները կը բացւին ու քննելէ վերջ տէրերուն կը յանձնուին. անորոշութիւնը կը տանջէ ահաւելի կերպով բոլոր զգացող հայերը, զի ամեն ալ գիտեն, որ այդ անորոշութեան ետին սոսկալի արհաւիրքներ ու սարսափներ կան միայն: Հայաստանի մէջ ձմեռն սկսած է արդէն և, աւանդ, շուտով ձիւնի հաստ խաւին տակ կը ծածկին արեան քստմնելի յիշատակներն ու ցուրտը կը սառցնէ շատ մը նօթի հայերու երեքուն կեանքն ու անոնց արցունքն: Սուլթանը յաջողեցաւ դառնութեան յետին կաթիլը լսմցնել տալ մեզ, ամօթ հայերուս, եթէ չկրնանք վրէժ լուծել. պէտք է փոխարինել, մէկի տեղ երկուք տարու է, պէտք է կործանել սուլթանական կառավարութիւնը:

Հարուստներին, մանաւանդ պոլսեցիներու պախարակելի անտարբերութիւնը կը շարունակուի տակաւին. զէյթունցի քաղեր հերոսաբար կը կուրին, հայ մեռնել հայ անունն անմահացնել կուզեն, որի՞ մտքէն կանցնի նիւթական օգնութիւն հասցնել այդ դիւցազուններուն: Եւ միթէ հայերուս կոտորման պատասխանատուութիւնը մասամբ չը ծանրանար մեր անբարոյական ու այլասեուած հարուստներու վրայ: Միթէ անոնց դրամին տասներորդը բաւական չէր շատ մը գաւառներ զինելու. այն ժամանակ մեր բաղդը տարբեր կը լլար:

Ջարմանալի ու տխուր երեւոյթ մը ալ: Պոլսի կոտորածի ժամանակ հոս եկեղեցիներու վրայ իբրև սու-

գի նշան սևեր դրւեցան, շատ տեղեր հսկում ու հոգեհանգիստ կընէին, հիմայ երբ գաւառները կը կոտորեն ասոնց և ոչ մէկը չկայ ու պոլսեցուն դէմքին վերայ ատելի անտարբերութիւն մը կը տեսնուի: Պոլսեցուն համար ազգասիրութիւնն ու եղբայրասիրութիւնը կամփոփուին անձնասիրութեան մէջ ամօթ:

ՆՆՆՐԱՏԻՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՅՈՒՅԱԿԸ
 Հ. Յ. Դաշնակցութեան կերպ. սնդուկի մէջ ստացւած են.

Միսայէլօվից 690 ֆրանկ, Փէրիգից 30 օսմ. ոսկի, Մրջիւնից 30 օսմ. ոսկի, Վարդան Դերձակեանից 5 օսմ. ոսկի, Լիէժ ք.-ից Վարդից 30 օսմ. ոսկի:

Ռուսիայի Տ. քաղ. «Դաշնակցական Բանուր խումբից» ստացւեց 300 ֆրանկ:

Բօլդ. Սլիվ. ք.-ի Դաշնակցական «Օժանդակ» կօմիտէից 120 ֆրանկ, Բուրգասի Դաշնակցական «Ազգանաղեան» կօմիտէից 100 ֆր.:

Վիշապ քաղաքի կերպրոնական սնդուկի մէջ ստացւած են.

Տ. Մ. Հրաչեայ 20 դահեկան, Յառաջագիւմասէր խ. 100 դհ., Հրազէն խ. 88 դհ., Ս. Հ. Գ. 20 դհ., Արարատ խ. 40 դհ., Արմենուհի խ. 92 դհ., Զրվէժ խ. 60 դհ., Արծիւ 37 դհ., Անանուն խ. 50 դհ., Յ. Կ. 480 դհ.:

Հայկաւանէն.—Հրաչեայ 1 մէճիտ, Բ. Ի. վաճառատնէն 2 մէճիտ, Մաղնիսայի Երկաթի խմբէն 2 օսմ. ոսկի, Ջանազաններէ 436 դհ.:

Արշակաւան քաղաքի կերպրոնական սնդուկի մէջ ստացւած են.

Մահացու խ. 75 դահեկան, Աշխատասէր 20 դհ., Թամարա 20 դհ., Հրահատ խ. 40 դհ., Պարոնեան 5 դհ., Ուժանակ խ. 55 դհ., Յովնան խումբէն 150 դհ., Վարդանոյշ 40 դհ.:

Թիւրիմացութիւնների տեղիք չտալու համար, ստիպւած ենք մեր նոր հասցէն դարձնել «ԱՐՄԷՆ-ԳԱՍՊԱՐ», որի վրայ հրաւիրում ենք առանձին ուշադրութիւն:

Դաշնակցութեան անձամօթներից նմուրում է թղթակցութեան և ներատուութեան համար դիմել:

Armène-Gaspar, poste restante, Carouge (Suisse).

L. Boole, 15, Augustus Rd. Hammersmith, W. London.

Վիեննա, Դաշնակցութեան ազատ սպարան: